# ԱՄՍՕՐ ՁՈՒՅՑ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԷ ՏԱՐԻ ԹԻՒ 125 ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 2018

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԵՌԱԼՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

## ՀԱՒԱՏՆԵՐԻՆ ԼՈՒՐԵՐ

*Սիրելի ընթերցող,*
*«Նոր Ջուղա-տեղեկատու»-ի այս համարից սկսած բոլոր լուրերը, բացի Ազգային Առաջնորդարանին առնչող, տպելու են համառօտ:*
*Լուրի ամբողջական տարբերակը ընթերցելու եւ նկարները դիտելու համար կարող էք այցելել Ազգ. Առաջնորդարանի պաշտօնական կայքէջ www.norjugha.ir կամ www.vank.ir հասցէներով:*

---

*Սիրելի հայրենակիցներ,*
*Այսուհետ Ձեր տեսակէտները, առաջարկները եւ քննադատութիւնները կարող էք փոխանցել Ազգ. Առաջնորդարանի մուտքի մօտ տեղադրուած արկղում կամ vank_proffice@yahoo.com կամ s.a.vank.proffice@gmail.com էլեկտրոնային փոստին:*

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐԱՆՈՒՄ՝ ԱՐԵԱՆ ՏԻՉՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԵՑ ՍՊԱՀԱՆԻ ԱՐԵԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Երկար տարիներ է, ինչ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման Նոր Ջուղայի յանձնախմբերի նախաձեռնութեամբ, ապրիլի 23-ի երեկոյեան, Ս. Ամենափրկիչ վանքում, բողոքի համահաւաքին զուգահեռ, Ցեղասպանութեան սուրբ նահատակների թանկագին յիշատակին կազմակերպւում է արեան տուչութեան աշխատանքը, ուր պահանջատէր հայորդիներն իրենց արեան նուիրաբերումով մասնակից են լինում բարեսիրական այս ակտին: Ամենամեայ այս ծրագիրը տեղի է ունենում Սպահան քաղաքի Արեան փոխներարկման կազմակերպութեան հետ համադրաբար:

Հայոց Ցեղասպանութեան 103-ամեակի ոգեկոչման Նոր Ջուղայի յանձնախմբի գեղեցիկ մտայղացմամբ այս տարի առաջին անգամը լինելով, արեան տուչութեան ծրագիրն իրականացուեց Սպահանի Արեան փոխներարկման կազմակերպութեան կենտրոնում, հինգշաբթի՝ ապրիլի 19-ի առաւօտեան: Նորջուղայեցիներից կազմուած 35 հոգանոց այս պատուիրակութեանը գլխաւորում էին արժ. հոգեւոր հայրեր՝ Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանն ու Տ. Սահակ քհնյ. Մինասեանը եւ ոգեկոչման յանձնախմբի ներկայացուցիչները:

Քանի որ բարեսիրական բնոյթից բացի՝ կարեւորւում էր յատկապէս աշխատանքի քարոզչական նշանակութիւնը, յանձնախումբը Ցեղասպանութեան իրողութիւնը պարսիկ հայրենակիցներին առաւել չափով ծանօթացնելու համար՝ պատրաստել էր բացատրական պաստառ, որը ցուցադրուեց նշուած կենտրոնում:

Ընթացքում ոգեկոչման յանձնախմբի նախագահ Գեղարդ Մանսուրեանը արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ընկերակցութեամբ հանդիպում ունեցաւ կենտրոնի տնօրինութեան հետ, ուր բացատրելով Հայոց Ցեղասպանութեան եւ աշխատանքի նպատակների մասին, շնորհակալութիւն յայտնեց պատուիրակութեանը ջերմ ընդունելու համար: Հիւրընկալը եւս իր հերթին գնահատանքի խօսք ուղղեց քաղաքի հայ համայնքին՝ նման մարդասիրական գործ իրականացնելու առթիւ:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵՒ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ԵՒ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԾԱՂԿԵՄԱՏՈՅՑԸ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔՈՒՄ

Շաբաթ՝ 2018 թւականի ապրիլի 21-ի առաւօտեան, Նոր Ջուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի եւ «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի եւ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» տարրական դպրոցի տնօրինութիւնների, ուսուցչական կազմերի, ծնողական խորհուրդների ու աշակերտների մասնակցութեամբ Ս. Ամենափրկիչ վանքում կայացաւ աշակերտական ծաղկեմատոյց՝ Հայոց Ցեղասպանութեան 103-ամեակի առթիւ:

Ծրագիրն սկիզբ առաւ «Արմէն» դպրոցի աշակերտներ՝ Մինելի Մարկոսեանի, Էմին Թահմազեանի եւ Լուսին Տէր-Մկրտչեանի ասմունքով, որին յաջորդեց դպրոցների ներկայացուցիչների միջոցով ծաղկեպսակների զետեղումը՝ յուշարձանի առջեւ:

Նոր Ջուղայի մանկապարտէզ-նախակրթարանի սաները հանդէս եկան առիթին նւիրուած խմբական երգով ու ասմունքով:

«Սրբոց Վարդանանց» դպրոցի անունից աշակերտական խօսք ընթերցեց Ռենիթա Նազարեանը, իսկ վերջում աշակերտների խմբական կատարմամբ հնչեց պահանջատիրական մի երգ:

Յանուն «Արմէն» կրթահամալիրի պարսկերէն
խօսքն ընթերցեցին Մելինի Բաբախանը եւ Ադելինա Յարութիւնեանը, իսկ անգլերէնը՝ Էրին Յովսէփեանն ու Սելին Բաղրամեանը: Խմբական ասմունքով հանդէս եկան Արգիշտի Աբգարեանը, Վանէ Յովսէփեանը, Անիտա Մայիլեանը, Արգիշտ Քեշիշեանը, Փրենի Թահմազեանը, Արէն Զարգարեանը, Էմինէ Խուդաբախշեանը եւ Մելինի Թորոսեանը: Գեղարուեստական կատարումները եզրափակուեցին նոյն դպրոցի աշակերտութեան խմբական երգով:

Այնուհետեւ իր հայրական պատգամը փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Սիփան եպս. Քէչէճեանը, ով կարեւորութեամբ շեշտելով, թէ այս ծրագրին մասնակցելը՝ ազգի, հայրենիքի եւ եկեղեցու հանդէպ ունեցած պարտքի կատարում է, իր ուրախութիւնը յայտնեց նման գիտակից նոր սերունդ ունենալու համար: Նա իր հպարտութիւնը յայտնեց նաեւ, առ այն որ, Սպահանի հայոց թեմում այսպիսի հայեցի դաստիարակութեամբ ու ազգային ինքնագիտակցութեամբ սերունդներ են դաստիարակւում:

Ծրագիրը վարեցին «Արմէն» կրթահամալիրի աշակերտներ՝ Արմօ Ասատրեանն ու Սելինէ Օրդուբէգեանը: Սոյն կրթահամալիրի աշակերտական ելոյթները կատարեցին դպրոցի 6-րդ դասարանի սաները:

Վերջում բոլոր ներկաները մէկական ծաղիկներ դրեցին յուշարձանի մօտ՝ վառ պահելու սրբացած նահատակների յիշատակը:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. «ՔԱՆԱՆԵԱՆ» ԵՒ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԾԱՂԿԵՄԱՏՈՅՑԸ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔՈՒՄ

Կիրակի՝ 2018 թւականի ապրիլի 22-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Հայոց ազգ. «Քանանեան» եւ «Կատարինեան» միջնակարգ դպրոցների աշակերտ-ուհիները ընկերակցութեամբ իրենց տնօրինութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի ներկայ գտնուեցին Ս. Ամենափրկիչ վանքում՝ յարգանքի տուրք մատուցելու Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակների յիշատակին:

Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սիփան եպս. Քէչէճեանը, քահանայից դասի ու Թեմական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչները, Հայոց Ցեղասպանութեան 103-ամեակի ոգեկոչման յանձնախմբի անդամներն ու ժողովուրդ:

Սկզբում ծաղկեպսակ զետեղուեց յուշարձանի առջեւ, ապա աշակերտական ելոյթների շարանում բացման խօսքով հանդէս եկաւ Մինելի Ղազարեանը:

Լիլիթ Գէորգեանն ասմունքեց «Հայուհի» բանաստեղծութիւնը, Ռենիա Մինասեանն ընթերցեց անգլերէն լեզուով խօսքը, Ֆէրէյդուն Մոշիրիի «Շարմեթան բադ» բանաստեղծութիւնն ասմունքեց Արգամ Յովսէփեանը, իսկ «Քէլէ լաօ» բանաստեղծութիւնը՝ Լիանա Ղազարեանը:

Ծրագրի աւարտին իր պատգամը փոխանցեց առաջնորդ Սրբազան Հայրը, ուր շեշտեց, թէ հայ ազգի նոր սերունդն իր արժէքը, տեղն ու դերակատարութիւնը իմանալով, պէտք է զբաղեցնի ապրիլ 23-ին ձերբակալուած, ապա նահատակուած մտաւորականների տեղը եւ դէպի ապագայ առաջնորդի իր ազգին ու հայրենիքը: Նա աղօթեց առ Բարձրեալն Աստուած, որ լուսաւորի մատաղ սերնդի ճանապարհը՝ հայ ազգի ապագայ մտաւորականները դառնալու համար:

Ընթացքում պահանջատէր աշակերտները բռունցքները վեր բարձրացրած վանկարկեցին բողոքի եւ պահանջատիրութեան լոզունգներ, իսկ վերջում մէկական ծաղիկներ տեղադրեցին Եղեռնի յուշարձանի մօտ:

Յատկանշական է, որ ոգեկոչման ծրագրերի շարանում, հայոց դպրոցների աշակերտները մասնակցեցին Ս. Ամենափրկիչ վանքում կազմակերպած աշակերտական աշխատանոցներին եւ պատրաստեցին պատի թերթեր ու ձեռքի աշխատանքներ: Նոր Ջուղայի «Արմէն» տարրական կրթահամլիրի եւ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի 5-րդ եւ 6-րդ դասարանի սաների համատեղ աշխատանոցը կայացաւ չորեքշաբթի՝ ապրիլի 18-ին, իսկ «Քանանեան» ու «Կատարինեան» միջնակարգ դպրոցներինը՝ ուրբաթ՝ ապրիլի 20-ին: Աշխատանոցներում պատրաստուած աշխատանքները եւ մանկապարտէզ-նախակրթարան ու տարրական դպրոցների աշակերտութեան նկարչութիւնները ցուցադրուել էին վանքի շրջափակում:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՔՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Հայոց Ցեղասպանութեան 103-ամեակի ոգեկոչման ծրագրերը ժողովրդի խուռներամ մասնակցութեամբ իրականացան Նոր Ջուղայում:

Երկուշաբթի՝ ապրիլի 23-ի երեկոյեան, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սիփան եպս. Քէչէճեանի նախագահութեամբ ու կատարողութեամբ եւ

եկեղեցական դասի մասնակցութեամբ, «Ս. Ստեփանոս» եկեղեցում կայացաւ Սրբոց Նահատակացն Բարեխօսական կարգը: Այնուհետեւ թեմական առաջնորդի գլխաւորութեամբ սկիզբ առաւ խորհրդաւոր լռութեան ներքոյ մոմերով երթը, որի շարքերը յորդառատ անձրեւն անգամ չկարողացաւ նոսրացնել: Դէպի Ս. Ամենափրկիչ վանք տանող այս երթին մասնակցել էին Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, հոգեւոր հայրերը եւ ազգային մարմինների ու Հայ Դատի յանձնախմբի անդամները եւ ժողովուրդ:



Վանքում պահանջատէր ժողովրդին իր խօսքն ուղղեց պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, ով նշելով, որ Օսմանեան կայսրութեան իշխանութիւնը տարածաշրջանում հայ ժողովրդի համար աղէտալի հետեւանքներ բերեց, որոնց շարանում ամենաղէտալին ծրագրած տեղահանութիւններն ու Ցեղասպանութիւնն էին, շեշտեց, թէ Թուրքիայի հանրապետութեան հիմքը ոճրագործութեան վրայ է դրուած եւ նրանք չեն կարող թաքցնել հայ ժողովրդի դիակներն ու թափուած արիւնը:

Նա իր խօսքի շարունակութեան մէջ յիշեցնելով, որ Թուրքիայի պետութեան հայատեացութեան քաղաքականութիւնը աւարտած չէ, աւելացրեց, թէ հայ ժողովրդի պայքարը երկարաշունչ է լինելու, քանի որ նա տոկուն է, արի, գիտի բռունցք դառնալ եւ գիտի ամենաբարդ պահերին ինչպէս միասնական ոգի դրսեւորել. երկարաշունչ պայքարը հաստատ յաղթանակով է աւարտելու:

Վանքում կայացած համահաւաքը վարեց Ադրինէ Ղեւեանը:

Երեքշաբթի՝ ապրիլի 24-ի առաւօտեան, սկզբում թեմական առաջնորդի նախագահութեամբ եւ արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանի ձեռամբ, Մեծ Եղեռնի բիւրաւոր Սուրբ նահատակների յիշատակին մատուցեց ս. եւ անմահ պատարագ, Ս. Ա. վանքի «Ս. Յովսէփ Արիմաթացի» եկեղեցում: Այնուհետեւ շրջափակում, Ցեղասպանութեան բիւրաւոր նահատակների յոշարձանի առջեւ կայացաւ ծաղիկների մատուցման արարողութիւն՝ ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների, հայոց դպրոցների ու ժողովրդի մասնակցութեամբ: Ժամը 11:30-ին, մեծաթիւ հայորդիների մասնակցութեամբ սկիզբ առաւ բողոքի քայլարշաւը, որը ներկաների ուժգին վանկարկումների ներքոյ ընթացաւ Արեւելեան Նազար, Թոհիդ, Շարիաթի եւ Հաքիմ Նեզամի գլխաւոր պողոտաներով:Քայլերթին մասնակցող Ժողովրդին առաջնորդում էին Սրբազան Հայրը, քահանայից դասը, պատգամաւոր ժորժիկ Աբրահամեանն ու ազգային մարմինների ու շրջանի Հայ Դատի յանձնախմբի անդամները:

Նոյն օրը երեկոյեան, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում կայացաւ դասախօսական-գեղարուեստական երեկոյ, որին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սիփան եպս. Քէչէճեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, քահանայ հայրեր, ազգային մարմինների ու Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչներ եւ ժողովուրդ:

Երեկոն սկիզբ առաւ «Սուրբերու աչքեր» երգով,

որը կատարեց Ս. Ա. վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախումբը:

Թեմական խորհրդի խօսքն ընթերցեց Սոնիկ Բաղումեանը: Խորհրդի ատենադպիրն ընդգծեց, որ Թուրքիայի պետութիւնն իր պատմութեան եւ պարտաւորութիւնների հետ առերեսուելու փոխարէն, Նոր-Օսմանական նկրտումներով ապակայունացնում է մեր տարածաշրջանը եւ զօրք է մտցնում հարեւան երկրներ՝ միեւնոյն ժամանակ ոտնահարելով իր իսկ քաղաքացիների իրաւունքներն ու անտեսելով նրանց արդար պահանջը՝ ընդունելու Հայոց Ցեղասպանութեան պատասխանատուութիւնը:

Տկն. Բաղումեանն անդրադառնալով նաեւ անցնող օրերի ընթացքում Հայաստանում ձեւաւորուած ժողովրդային շարժումին՝ ասաց. «Դրա յաջողութեան հիմնական գրաւականը հայութեան եւ յատկապէս հայրենի ժողովրդի ու երիտասարդ սերնդի զգօնութիւնն ու գործունէութիւնն է՝ միմիայն խաղաղ ճանապարհներով առաջ գնալու համար, Ժողովրդային շարժումը պէտք է շարունակի թոյլ չտալ որեւէ արտաքին միջամտութիւն Հայաստանի ներ-քաղաքական կեանքում՝ յոյժ կարեւորութեամբ հետեւելով հայրենի սահմանների անվտանգութեանը»:



Երեկոյի դասախօսն էր գերշ. Տ. Սիփան եպս. Քէչէճեանը: Սրբազան Հայրն իր ելոյթում մատնանշելով, թէ աշխարհում գոյութիւն ունեն պատերազմի սառը եւ տաք տեսակները՝ յատկապէս ընդգծեց, թէ լինում են սեւ եւ սպիտակ ջարդեր:

Դասախօսը նշելով, որ մեր ազգի նկատմամբ կիրառուած Ցեղասպանութիւնը առ այսօր շարունակւում է հայկական սպիտակ ջարդի ներքոյ, սպիտակ ջարդը բնութագրեց մի երեւոյթ, որն աւելի երկարաժամկէտ եւ թեթեւազդու է ցեղասպանութեան համեմատութեամբ:

Նա հայկական սպիտակ ջարդի տեսակները թւարկեց հետեւեալ կէտերում.

ա. Որդեծնութեան պակաս, որը մերօրեայ պայմաններում հանգեցրել է հայ ընտանիքների անդամների թւի նւազմանը:

բ.Արտագաղթ, ինչի արդիւնքում դատապարտուած ենք տկարանալու եւ մարելու:

գ. Թշնամիների կողմից երկրի շրջափակում, որը մեր հայրենիքի հզօրանալու, հարստանալու եւ բարգաւաճելու հնարաւորութիւնները նւազեցնում է:

դ.Հանդարտ կամ պաղ պատերազմ, ինչի պարզ ապացոյցը հայ ժողովրդի նկատմամբ Թուրքիայի եւ Ադրբեջանի թշնամական վերաբերմունքը եւ հայրենիքի սահմաններում տիրող ոչ խաղաղ վիճակն է:

ե. Տեղափոխութիւն, որը հիմնականում առաջացել է հայրենիքի իրավիճակի պատճառով.

զ. Ջուլում, որի վտանգների ծաւալը մեծ է հայ ժողովրդի համար՝ այն պարզ պատճառով, որ հայութեան հսկայական զանգւածը բնակւում է հայրենիքից դուրս:

Երեկոյի գեղարւեստական բաժնում հիմնականում հայրենասիրական ոգեշնչող երգերով ելոյթ ունեցան Հայաստանից ժամանած երգիչներ՝ Արմէն Յովհաննիսեանն ու Յակոբ Յակոբեանը, իսկ ընթացքում Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» համոյթի կրտսեր պարախումբը կատարեց «Արցախ» պարային համարը, իսկ աւագ խումբը՝ «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»-ը: Նոյն համոյթի ասմունքի խմբի անդամները հանդէս եկան երկու ասմունքներով. Նազէ Ասատրեանը, Անի Ղազարեանն ու Վանանդ Իսաղուլեանն ասմունքեցին Ս. Կապուտիկեանի «Մտորումներ ճանապարհի կէսին» բանաստեղծութիւնը, իսկ Թանիա Մինասեանը՝ Սիամանթոյի «Մենախօսութիւն»-ը:

Ապրիլ 24-ի առաւօտեան վանքում իրականացուած ծաղկեմատոյցը եւ երեկոյեան «Արարատ» միութիւնում տեղի ունեցած դասախօսական-գեղարւեստական ձեռնարկը վարեց Մարտունի Խաչիկեանը: Եկեղեցական երկօրեայ արարողութիւնների ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ խմբավար Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:

Յատկանշական է, որ Հ.Յ.Դ. «Թադէոս Թադէոսեան» պատանեկան միութեան գեղեցիկ մտայղացմամբ պատրաստուել էր միասնականութիւնը խորհրդանշող մի պատկեր, որը ապրիլ 24-ի միջոցառումներին զուգահեռ ցուցադրուեց Ս. Ա. վանքի ու «Արարատ» միութեան շրջափակում եւ ամբողջովին գունազարդուեց պահանջատէր ժողովրդի միասնական ջանքերով:



# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Երկուշաբթի՝ 2018 թւականի ապրիլի 23-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահիրի «Սրբոց Վարդանանց» սրահում կայացաւ Սրբոց Նահատակացն Բարեխօսական կարգը՝ նախագահութեամբ Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի եւ մասնակցութեամբ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ու սարկաւագաց դասի:

Ներկայ էին՝ ազգային մարմինների, Շահինշահիրի հայ համայնքի վարչութեան ու Հայ Դատի գրասենեակի ներկայացուցիչները, միութենականներ, հայոց ազգ. դպրոցների աշակերտ-ուհիներն ու պատասխանատուները եւ հոծ թւով ժողովուրդ:

Կարգին յաջորդեց համահաւաքը, որը բացուած յայտարարուեց Հայոց Ցեղասպանութեան 103-ամեակի ոգեկոչման Շահինշահիրի յանձնախմբի անդամ Քարմէն Մատթէոսեանի խօսքով:

Այնուհետեւ Շահինշահիրի հայոց ազգ. «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի սաները ելոյթ ունեցան խմբական երգերի կատարմամբ, իսկ «Սրբոց Վարդանանց» տարրական դպրոցի աշակերտական խօսքն ընթերցեց Ռենիտա Նազարեանը. նոյն դպրոցի աշակերտ-ուհիները, երգուսոյց Նարբէ Տէր-Գրիգորեանի ղեկավարութեամբ, հանդէս եկան խմբական երգերով, իսկ ընթացքում ասմունքեցին Մանիֆա Յովհաննիսեանը, Մարիսա Խանմելիքեանը եւ Թինա Մինասքանեանը. մեներգեց Ռենիտա Նազարեանը:

Շահինշահիրի հայ համայնքի վարչութեան խօսքն ընթերցեց Ռայմոնդ Թորոսեանը, ուր ընդգծուած էր. «Թէեւ մեզ մեծապէս յաջողուել է միջազգային իրաւական դաշտում ակնառու առաջխաղացում ունենալ Հայոց Ցեղասպանութեան ճանաչեցման հարցում, սակայն պէտք է սթափ լինենք ոխերիմ թշնամու սադրանքները դիմագրաւելու յոյժ կարեւոր գործում»:

Ծրագրի շարունակութեան մէջ Շահինշահիրի Հայ Դատի գրասենեակի անունից արտայայտուեց Արիս Դաւութեանը, ով նշելով, որ Հայ Դատի ուղղութեամբ կարեւոր են թէ միջազգային մակարդակում իրականացուող գործունէութիւնը եւ թէ ներքին ճակատում աշխատանքները, սոյն ճակատի կարեւոր իրագործումներից համարեց՝ հայկական պետականութեան ամրապնդումը, գիտակից եւ հայրենանուէր սերունդների դաստիարակութիւնը, համայն հայութեան միասնականութեան պահպանումը, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնների հոգային ամբողջականութեան պաշտպանումը, հայրենիքի տնտեսութեան բարգաւաճումը եւ նոր սերնդի հոգում հայկական արժէքների սերմանումը:

Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահիրի մասնաճիւղի վարչութեան խօսքն ընթերցեց Վարդուհի Պօղոսեանը, ով պատմական ակնարկ ունենալով Հայոց Ցեղասպանութեան իրողութեանը, նշեց, որ հայը ապաւինելով իր սեփական ուժին, աշխարհի տարբեր երկրներում ստեղծեց բազմաթիւ մեծ ու փոքր հայաստաններ՝ պահպանելով իր սերտ կապը Մայր Հայրենիքի հետ:

Ելոյթների շրջագծում Փերիոյ Կրթասիրաց միութեան Շահինշահիրի մասնաճիւղի վարչութեան կողմից արտայայտուեց Զանիկ Թահմազեանը, իսկ Շահինշահիրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան խօսքն ընթերցեց Անահիտ Օհանեանը: Պրն. Թահմազեանն իր խօսքում ընդգծեց, որ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը պատասխանատուութիւնից խուսափելու համար կատարուող յանցագործութիւն է, որը նոր ցեղասպանութիւնների պատճառ է հանդիսանում, իսկ տկն. Օհանեանն անդրադառնալով 20-

րդ դարի ամենաողբերգական դէպքին՝ Հայոց Ցեղասպանութեանը, շեշտեց, թէ Ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովուրդը կորցրեց թէ՛ իր պապենական հայրենիքի զգալի մասը եւ թէ՛ իր քոյրերին ու եղբայրներին:

Վերջում իր հայրական պատգամը փոխանցեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ով բնաբան ունենալով Գարեգին Նժդեհի «Եթէ ազգը բանակ է դառնում ոչ ոք է կարող նրան ծնկի բերել» խօսքը, ասաց. «Հայոց Ցեղասպանութեան ճանաչման, պահանջատիրութեան եւ Հայ Դատի աշխատանքների արդիւնքը եղել է հայերի ուժի եւ հզօրութեան մակարդակի բարձրացումը, միասնականութիւնը եւ բռունցքը, որն ի վիճակի է թշնամուն ծնկի բերել ու արդար հատուցում պահանջել»:

Համահաւաքի աւարտին ներկաներն առիթ ունեցան դիտելու Շահինշահրի Հայոց ազգ. դպրոցների աշակերտ-ուհիների նկարչութիւններն ու ձեռքի աշխատանքները՝ օրուայ թեմայով:

Երեքշաբթի՝ ապրիլի 24-ի առաւօտեան ժամը 9:30-ին, «Սրբոց Վարդանանց» եկեղեցում տեղի ունեցաւ սուրբ եւ անմահ պատարագ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ. օրուայ պատարագիչն էր արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, իսկ երգեցողութեամբ հանդէս եկաւ Շահինշահրի «Նարեկ» երգչախումբը: Պատարագի աւարտին շրջափակում տեղի ունեցաւ բողոքի համահաւաք:

Սկզբում հոգեւոր տեսուչ Հայր Սուրբը ներկաներին փոխանցեց իր խօսքը, ուր յիշեցնելով համահաւաքի նպատակները՝ պահանջատիրութիւնը բարձրաձայն աղաղակելը եւ նահատակների արեան կանչը համայն աշխարհին լսելի դարձնելը, աւելացրեց. «Մենք չենք սգում մեր քոյրերի ու եղբայրների նահատակութիւնը, այլ նրանց սրբութեամբ կրկին անգամ յարութիւն ենք առնում եւ ուժ ենք ստանում, վերանորոգում ենք մեր կամքը, հաւատը եւ մանաւանդ մեր պահանջատիրութեան ոգին, որովհետեւ աշխարհին պէտք է ցոյց տանք, թէ հայերն այլեւս նահատակներ չունեն. հայերն ունեն սուրբեր եւ նրանք են, որ մեզ զօրութիւն են տալիս»:

Այնուհետեւ կազմակերպիչ յանձնախմբի անդամ Ռազմիկ Մարկոսեանի միջոցով ընթերցուեց Հայոց Ցեղասպանութեան 103-ամեակի առթիւ հաստատուած պարսկերէն բանաձեւը, որին յաջորդեց ծաղիկների մատուցման արարողութիւնը՝ մասնակցութեամբ համայնքի հոգեւորականաց դասի, Հայ Դատի գրասենեակի անդամների, ազգային մարմինների, միութիւնների ու հայոց ազգ. դպրոցների պատասխանատուների, ոգեկոչման յանձնախմբի եւ ժողովրդի:

Միջոցառումն հաղորդավարեց Քարմէն Մատթէոսեանը:

Չորեքշաբթի՝ ապրիլի 25-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի սրահում, տեղի ունեցաւ դասախօսական-գեղարուեստական երեկոյ, ուր ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տէր Սիփան եպս. Քէչէճեանը, արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, Իրանի իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, ազգային մարմինների, Հայ Դատի ու միութիւնների ներկայացուցիչները եւ հոծ ժողովուրդ:

Ոգեկոչման յանձնախմբի անունից բացման խօսքով եւ ձեռնարկի հաղորդավարութեամբ հանդէս եկաւ Վիոլետ Յարութիւնեանը, որից յետոյ դասախօսական ելոյթ ունեցաւ գերշ. Տ. Սիփան եպս. Քէչէճեանը:

Նա անդրադառնալով սեւ եւ սպիտակ ջարդերի տարբերութիւններին՝ առանձնաբար բացատրեց հայկական սպիտակ ջարդի վեց տեսակները, որոնք են՝ որդեծնութեան պակասը, արտագաղթը, թշնամիների կողմից երկրի շրջափակումը, հանդարտ կամ պաղ պատերազմը, տեղափոխութիւնը եւ ձուլումը:

Դասախօսն աւելացրեց նաեւ. «Ցեղասպանութիւնը շարունակւում է ճերմակ ջարդի տեսքով, որի տեսակներից մի քանիսը կատարւում է թշնամու միջոցով, իսկ միւս բաժինը՝ մեր ձեռքով: Ուստի մեզ պէտք են ուշադրութիւն, զգօնութիւն եւ իմաստութիւն, որպէսզի յանձն առնենք եւ ձեռնարկենք զանազան միջոցներ՝ նմանօրինակ աղէտների դէմն առնելու համար: Պէտք է կարողանանք հզօր պետականութեամբ, ծրագրուած եւ կատարեալ համակարգով ու յատկապէս համազգային միասնականութեամբ կանխարգելել բոլոր ներկայ եւ գալիք վտանգներն ու աղէտները»:

Գեղարուեստական բաժնում Վանանդ Իսաղուլեանը մեներգեց «Հայի զաւակ»-ը եւ «Յուշարձան-

ներ»-ը, Արութին Հախնազարեանը՝ «Տուն իմ հայրենի» եւ «Հայ զինուոր» երգերը, Նազելի Մարկոսեանը՝ «Զինուորի մօր երգ»-ը, Շանթ Թահմազեանը՝ «Կռունկ»-ը եւ Արգին Շահմիզայեանը՝ «Հայ քաջ զինուոր» երգը:

Ժաննա Շահբազեանը եւ Վեհանուշ Խուդաբախշեանը հերթաբար ասմունքեցին «Երգ կռունկի մասին» եւ «Հոգեհանգիստ» բանաստեղծութիւնները:

Գեղարուեստական ելոյթերն իրականացել էին գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի ղեկավարութեամբ:

Երեկոն եզրափակուեց Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանի խօսքով, ով սկզբում անդրադարձ ունենալով 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի պատմութեանը, հայրենիքի կորուստը համարեց Օսմանական կայսրութեան կողմից հայ ազգին հասցրած ամենադաժան եւ ահաւոր հարուածը: Նա նշելով, որ մեր ժողովուրդը պահանջում է Թուրքիայից առերեսուել իրականութեան հետ եւ ընդունել այն փաստը, որ իր պատմութիւնը կերտել է հայ ժողովրդի արիւնը թափելով, հայութեանը յորդորեց՝ հաւաքուել մէկ առանցքի շուրջ, որը հայ ժողովրդի ոտնահարուած իրաւունքների վերականգնումն է:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ԱՄԵԱԿԸ ՈԳԵԿՈՉԻԵՑ ՓԵՐԻՈՅ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԲՈԼՈՐԱՆ ԳԻՒՂՈՒՄ

Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի Փերիոյ շրջանի պատգամաւոր Զանի Նազարեանից տեղեկացանք, որ սոյն գաւառի հայաբնակ Բոլորան գիւղի բնակիչները Հայոց Ցեղասպանութեան 103-ամեակը ոգեկոչելու նպատակով, գիւղում կազմակերպել են մոմավառութեան արարողութիւն եւ բողոքի համահաւաք:

Սպահանից շուրջ 160 կ.մ. հեռաւորութեամբ գտնուող այս գիւղի հայութիւնը Ապրիլ 24-ի առաւօտեան, ներկայ գտնուելով տեղի «Ս. Ղուկաս» եկեղեցում, մոմ վառեց եւ աղօթեց Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակների անմոռաց յիշատակին:

Այնուհետեւ համախմբուելով Բոլորանի գերեզմանատնում հանգիստ առած Ալեքսանդր անունով հայորդու շիրիմի մօտ, ով Ցեղասպանութիւնից վերապրած եւ 1915 թւականին Իրան գաղթած հանգուցեալ Կէնեազի որդին է, խունկ ծխեց եւ աղօթք բարձրացրեց առ Աստուած: Հոգեպարար այս պահերին յաջորդեց ամենամեայ բողոքի համահաւաքը, ուր Պատգամաւորական ժողովի անդամ Զանի Նազարեանն իր պատգամն ուղղեց պահանջատէր ներկաներին:

Նա 103 տարի առաջ Օսմանական կայսրութեան միջոցով հայ ժողովրդի դէմ կատարուած տեղահանութիւններն ու ցեղասպանութիւնը ոճրագործութիւն համարելով, ասաց, որ Թուրքիայի պետութիւնը որպէս իր յանցագործ նախնիների իրաւայաջորդ, պէտք է առերեսուի պատմութեան հետ եւ հատուցում կատարի հայ ժողովրդին պատճառած բոլոր վնասների համար: Պրն. Նազարեանն իր խօսքի շարունակութեան մէջ շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն երկրներին ու միջազգային կազմակերպութիւններին, որոնք ճանաչել ու դատապարտել են Հայոց Ցեղասպանութիւնը:

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՀՋՕՐԱՑԱԿ ՉՈՐՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ

Շաբաթ՝ 14 եւ կիրակի՝ 15 ապրիլ 2018-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան չորս միաբան հայրեր՝ գերպ. Տ. Մասիս ծ. վրդ. Զօպուեանը (առաջնորդ Քովէյթի եւ շրջակայից հայոց թեմի), գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը (առաջնորդ Սպահանի հայոց թեմի), գերպ. Տ. Մեսրոպ ծ. վրդ. Սարգիսեանը (կաթողիկոսական փոխանորդ Արաբական Միացեալ Էմիրութիւնների, Քաթարի եւ շրջակայից հայոց թեմի) եւ գերպ. Տ. Թորգոմ ծ. վրդ. Տօնոյեանը (առաջնորդական փոխանորդ Ամերիկայի Միացեալ Նահանգների Արեւմտեան թեմի), արժանացան եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ օծման՝ բարձր հայեցողութեամբ եւ հայրական տնօրինումով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի:

## ՀԱՒԱՏՔԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒԽՏԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Շաբաթ՝ 14 ապրիլ 2018-ի երեկոյեան, Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարի մէջ տեղի ունեցաւ եպիսկոպոսական ձեռնադրութեան ու օծման կոչման արարողութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններից՝ գերպ. Տ. Մասիս ծ. վրդ. Զօպոյեանի, գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, գերպ. Տ. Մեսրոպ ծ. վրդ. Սարգիսեանի եւ գերպ. Տ. Թորգոմ ծ. վրդ. Տօնոյեանի:

Հայրապետական թափօրը նիւրապետական բոլոր կարգերի եւ ժողովրդի ներկայացուցիչներով ու հանդերձանքով առաջնորդուեց Վեհարանից դէպի Մայր Տաճար: Հայրապետի ամպ հովանին կրեցին ձեռնադրեալների կնքահայրերը՝ Անուշաւան Նազարեանը, Վարուժ Մովսէսեանը, Հրայր Սողոմոնեանը եւ Կարօ Էշկեանը: Նորին Սրբութիւնը գլխաւորեց թափօրը առընթերակայ ունենալով գերշ. Տ. Մուշեղ արք. Մարտիրոսեանին եւ գերշ. Տ. Նարեկ արք. Արեէմէզեանին:

Իրենց Թեմերի Ազգային Ժողովների խնդրագրերի եւ Վեհափառ Հայրապետի կողմից տրուած արտօնութեան համաձայն ընծայեալ հայր սուրբերը ներկայացան Մայր Տաճարի Ս. Երրորդութեան խորանի առջեւ եւ խարտաւիլակ հայր սուրբի՝ հոգշ. Տ. Պետրոս վրդ. Մանուէլեանի ու վկաների արտօնութեամբ ծնկաչոք կարդացին իրենց ուխտագիրները՝ հետեւելու անսայթաք կեանքի եւ ուղղափառ հայրերի վարքին ու գործունէութեան, ինչպէս նաեւ ծառայելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ իրենց վստահուած հօտին: Նրանք ստորագրեցին իրենց ուխտագրերը ու խարտաւիլակի եւ վկաների առաջնորդութեամբ ներկայացան Նորին Սրբութեանը՝ ստանալու համար նրա օրհնութիւնը: Հայրապետը եպիսկոպոսական իշխանութեան խորհրդանիշ եմիփորոնները հագցրեց ընծայեալներին եւ «Պահպանիչ»-ով օրհնեց նրանց:

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Կիրակի՝ 15 ապրիլ 2018-ին մատուցեց Ս. եւ անմահ Պատարագ նախագահութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի: Հանդիսաւոր արարողութիւնը սկիզբ առաւ հայրապետական թափօրով: Վեհափառ Հայրապետը ամպ հովանիի ներքոյ Ս. Սեղանին սպասարկող ամբողջ շքախմբով, մուտք գործեց Մայր տաճար՝ մատուցելու Ս. եւ Անմահ Պատարագը եւ կատարելու ձեռնադրութեան եւ օծման կարգը: Օրւայ Պատարագի

երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը՝ խմբավարութեամբ հոգշ. Տ. Զաւէն աբղ. Նաճարեանի:

Պատարագի ընթացքին ընծայեալները ծնկաչոք հրաժարուեցին աշխարհից եւ կոչուեցին եպիսկոպոսութեան կարգին: Ապա, սրբալոյս Միւռոնի հեղումով եւ «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողութեամբ, Նորին Սրբութիւնը օծեց ընծայեալների ճակատները եւ աջ ձեռքի բթամատը եւ նրանց յանձնեց եպիսկոպոսական գաւազանն ու մատանին: Աւարտին Հայրապետը ընծայեալների կրծքերը զարդարեց պանակէով:

Ձեռնադրութեան եւ օծման արարողութեան աւարտին Նորին Սրբութիւնը տուեց իր հայրապետական պատգամը: Առաջին հերթին Վեհափառ Հայրապետը իր ուրախութիւնը եւ գնահատանքը յայտնեց չորս ընծայեալների եպիսկոպոսական ծառայութեան միանալու կապակցութեամբ: Նա յայտնեց, որ սա ուրախութիւն է հայ եկեղեցու, հայ ժողովրդի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռի համար, որ Ցեղասպանութեան արհաւիրքն ապրելուց յետոյ կարողացել է վերանորոգ ոգով ու հաւատքով շարունակել իր առաքելութիւնն ու ծառայական կեանքը:

Վեհափառ Հայրապետն իր պատգամը ուղղեց նորաօծ եպիսկոպոսներին, կարեւորութեամբ շեշտեց երեք կէտեր, որոնք հիմնականօրէն ընդգծեցին հայ եկեղեցուն եւ ժողովրդին ծառայելու հրամայականը: Հայրապետը նորաօծ եպիսկոպոսներին թելադրեց հայ եկեղեցին ունենալ իրենց կեանքի առանցքը եւ յիշեցրեց, որ հայ եկեղեցին շէնք չէ, այլ Քրիստոսի մարմինն է, իսկ նրա դերակատարութիւնը սովորական դերակատարութիւն չէ եւ չի եղել մեր ժողովրդի կեանքում: Նորին Սրբութիւնը շարունակեց՝ ընդգծելով, որ եկեղեցին ծառայութիւն է եւ ոչ՝ իշխանութիւն. «Հետեւաբար ծառայութիւնը պէտք է դառնայ ձեր կեանքի առաքելութեան ուղին»,- յայտնեց նա: Ապա Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ յիշեցրեց նորընծայ եպիսկոպոսներին, թէ մեր եկեղեցու եւ ազգի գերագոյն արժէքները պէտք է դառնան իրենց կեանքի մղիչ ոյժն ու նպատակը:

Վեհափառ Հայրապետն իր պատգամը աւարտեց աղօթք բարձրացնելով առ Աստուած եւ խնդրելով Նրանից, որ նորաօծ եպիսկոպոսները վերանորոգ հաւատքով լծուեն ժողովրդի ծառայութեանը եւ նոր իրագործումներով արժեւորեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Ս. Աթոռի ծառայական երթը:

Քարոզից յետոյ, «Ողջոյն»-ի պահին, միաբան հայրերն ու բոլոր հոգեւորականները, խորան բարձրանալով՝ շնորհաւորեցին նորաօծ եպիսկոպոսներին՝ համբուրելով նրանց միւռոնաւած ճակատները եւ ձեռքերը:

Ս. Պատարագի աւարտին, նորաօծ սրբազան հայրերը ընդունեցին շնորհաւորութիւնները եկեղեցում:

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՍԻՓԱՆ ԵՊՍ. ՔԷՉԷՃԵԱՆԻ ՀԵՏ՝ ԹԵՄՈՒՄ ԻՐ ԵՐԿԱՄԵԱՅ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հայրական տնօրինումով, 2016 թւականի սեպտեմբերին, Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ նշանակուեց Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ով 2017 թւականի մայիսին, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական Ժողովի որոշմամբ ընտրուեց որպէս թեմի հոգեւոր առաջնորդ: Յետագայում, 2018 թւականի ապրիլի 15-ին, Անթիլիասում, դարձեալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի տնօրինումով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երեք այլ միաբան հայրերի հետ միասին, գերպ. Հայր Սուրբն արժանացաւ եպիսկոպոսական ձեռնադրութեան:

«Ալիք» օրաթերթի Նոր Ջուղայի թղթակիցն առիթը պատեհ համարելով հարցազրոյց է ունեցել գերշ. Տ. Սիփան եպս. Քէչէճեանի հետ՝ Սպահանի հայոց թեմում շուրջ երկու տարի իր ծառայութեան կապակցութեամբ, որն ստորեւ ներկայացնում է:

***Շուրջ երկու տարի է ինչ, սկզբում որպէս կաթողիկոսական փոխանորդ, ապա որպէս թեմական առաջնորդ պաշտօնավարում էք Սպահանի հայոց թեմում: Խնդրեմ բացատրէք, Ձեր ծառայողական դաշտում ի՞նչ հանգամանքներ փոխուեցին թեմի Պատգամաւորական ժողովի կողմից հոգեւոր առաջնորդ ընտրուելուց յետոյ:***

Հոգեւոր առաջնորդ ընտրուելուց յետոյ, մօտեցումներն զգալիօրէն փոխուեցին եւ դա բնական էր, քանի որ կաթողիկոսական փոխանորդի պաշտօնում ժողովուրդը քեզ դիտում է որպէս ժամանակաւոր այցելու անձ: Ես ինձ աւելի հոգեհարազատ որդի զգացի այս թեմում. թէեւ այդ որդիական զգացումը միշտ էլ գոյութիւն ունէր, սակայն առաւել ջերմութիւն ու մտերմութիւն առաջացաւ իմ, ազգային իշխանութեան եւ թեմի ժողովրդի միջեւ:

Բացայայտումների իմաստով նոյնպէս փոփոխութիւններ եղան: Բնականաբար որպէս կաթողիկոսական փոխանորդ ժամանակաւորապէս ես գտնւում որեւէ թեմում եւ այդ փաստը քեզ թոյլ չի տալիս խորքային ուսումնասիրել աշխատանքների ծալքերը: Երբ հոգեւոր առաջնորդ ընտրուեցի, գիտենալով, որ նաւազագոյնը չորս տարի ծառայելու եմ այստեղ, աւելի միջամուխ եղայ աշխատանքներին եւ առաւել խորացան փոխ-վստահութիւնները:

Առաջնորդութեան հանգամանքի շնորհիւ իմ եւ թեմի զաւակների միջեւ եղած սէրն ու վստահութիւնը երկկողմանի վերելք արձանագրեց:

***Ինչպէ՞ս էք գնահատում թեմիս երիտասարդութեան մօտ հոգեւոր կեանքը:***

Դժբախտաբար թեմի երիտասարդները շատ էլ մօտ չեն եկեղեցականներին: Ես այլ թեմերում էլ եմ ծառայել եւ այս առումով այնտեղի երիտասարդութեանն աւելի ակտիւ եմ տեսել: Այստեղ հոգեւորականի հանդէպ սէրն ու յարգանքն աւելի մեծ է միւս թեմերի համեմատութեամբ, սակայն երեւի դա հենց այն հիմնական պատճառն է, որ երիտասարդը չի կարողանում պէտք եղած չափով մօտենալ հոգեւորականին. կարելի է ասել չափազանց յարգանքը նոյնպէս հեռաւորութեան պատճառ է հանդիսացել:

Ամիսներ առաջ՝ Մեծ պահեցողութեան ժամանակաշրջանում, Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ քահանայական վերապատրաստման համագումար տեղի ունեցաւ, ուր փաստացի տեսալների հիման վրայ կազմուած զեկոյցների եւ հնչած հարցերի շնորհիւ կարողացայ առաւել չափով գնահատել այս կացութիւնը: Թեմի երիտասարդութեան հաւատը զօրաւոր է, սակայն մի բան է հաւատի զօրութիւնը եւ այլ բան՝ կրօնի մասին գիտելիքներ ունենալը: Մեր երիտասարդութեան եկեղեցական գիտելիքները բաւարար չափով չեն. հիմնականում նրանց մօտ այս գիտելիքների աղբիւրը կրօնի դասագրքերն են, որոնք դժբախտաբար դպրոցական տարիներին լոկ դասի նման սովորում եւ մեծ մասը մոռացութեան են տալիս:

Եկեղեցական արարողութիւններին մասնակցողների մեծամասնութիւնը տարեցներ են. մեր երիտասարդութիւնը հոգեւոր կեանքի ծարաւ ունի, որի փարատման համար պէտք է լայն աշխատանք կատարենք:

***Որո՞նք են Ձեր կողմից կարեւոր իրագործումները անցնող երկու տարիների ընթացքում:***

Անշուշտ կարեւոր իրագործումները միայն հոգեւոր առաջնորդի նախաձեռնութիւնները չեն կարող լինել, քանի որ ազգային իշխանութիւնը որպէս մէկ ամբողջականութիւն է աշխատում՝ սկսած թեմական առաջնորդից, որը նախագահում է այն, մինչեւ իւրաքանչիւր ժողովական:

Անցնող երկու տարիների ընթացքում շատ աշխատանքներ են իրականացուել, որոնցից կարեւորագոյնները ցանկանում եմ նշել:

Աւարտուեցին Շահինշահիր եկեղեցու վերանորոգման եւ բարեզարդման աշխատանքները, եւ այսօր սոյն վայրը միայն ծառայում է որպէս Աստծոյ տուն եւ այլեւս անցեալի նման եկեղեցու սրահը չի օգտագործւում զանազան առիթների համար:

Շահագործման հասաւ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահիրի մասնաճիւղի կենտրոնատեղին:

Թեմի որոշ շրջանների եկեղեցիներում եւ հայկական գերեզմանատներում իրականացուել են բարեզարդման եւ վերադասաւորման աշխատանքներ:

Լուսահանգիստ սրբավայրում իրականացուել են նորոգութիւններ եւ շինարարական գործեր:

Շիրազի եկեղեցին եւ դրա յարակից տարածքը զբօսաշրջութեան կենտրոնի վերածելու ուղղութեամբ հանդիպումներ են իրականացուել պետական

պատկան կազմակերպութիւնների հետ: Տեւալների համաձայն մեծաթիւ զբօսաշրջիկներ են այցելում Ճիրազ եւ եթէ մենք կարողանանք Ճիրազի եկեղեցին զբօսաշրջութեան կենտրոնի վերածել, լայն հնարաւորութիւն ենք ստեղծելու՝ շիրազահայ համայնքը, մեր թեմն ու ժողովուրդը աշխարհին եւ պարսիկ հայրենակիցներին առաւել չափով ճանաչեցնելու համար:

Թեմիս ժողովրդի բնակարանային խնդիրների լուծման ուղղութեամբ Նոր Ջուղայում կառուցել է 26 բնակարաններից բաղկացած մի համալիր, որի շինարարական աշխատանքն առաջիկայ օրերին կաւարտի:

Հարկ է նշել, որ ծրագրում ունենք նաեւ մի այլ բնակելի համալիրի կառուցումը, որի շինարարական աշխատանքների մեկնարկը կը տրուի մօտ ապագայում:

Նիւթական օժանդակութիւն է յատկացուել նորածինների ծնողներին եւ նորապսակ զոյգերին:

***Ձեր կարծիքով որոնք են Սպահանի հայոց թեմում հրատապ անելիքները: Եթէ կան նմանատիպ պարագաներ, որո՞նք են ազգային իշխանութեան ծրագրերն այդ ուղղութեամբ, որոնք ի դէպ գլխաւորում էք Դուք:***

Անշուշտ հրատապ հարցեր գոյութիւն ունեն, որոնք ազգային իշխանութեան զանազան մարմինների օրակարգի կարեւորագոյն կէտերից են: Առհասարակ թեմերի մակարդակում որոշ հարցերի լուծումը մի քիչ աւելի դժւար է, քանի որ թեմը պետութիւն չէ եւ այդ իմաստով հնարաւորութիւնները սահմանափակ են: Այսօր աշխարհի շատ պետութիւններ նոյնիսկ չեն կարողանում իրենց ժողովրդի բոլոր կարիքները հոգալ, սակայն մեր թեմի ազգային իշխանութիւնը փորձում է հնարաւորինս ժողովրդի կարիքներին ու պահանջներին գոհացում տալ:

Թեմի հրատապ հարցերը երեքն են: Առաջինը արտագաղթն է: Պատմութեան ընթացքում եղել են հսկայական համայնքներ, որոնք արտագաղթի հետեւանքով անգամ անհետացել են: Ի հարկէ վստահ եմ, որ այս համայնքը չի անհետանալու եւ յոյսեր ունեմ նրա ապագայի հետ կապած: Այս երեւոյթը մեր ժողովների օրակարգի մնայուն կէտերից է եւ մենք փորձում ենք ժողովրդի համար կենցաղային առաւել բարենպաստ պայմաններ ստեղծելով՝ կարելի եղածը կատարել այն կասեցնելու ուղղութեամբ:

Երկրորդ հրատապ խնդիրը ժողովրդի բնակարանային հարցն է, որը կարելի է ասել՝ արտագաղթի հիմնական պատճառներից է: Համոզուած եմ, որ այս առումով որքան դիւրութիւններ ստեղծենք ժողովրդի եւ յատկապէս երիտասարդների համար, այնքան յաջողելու ենք նրանց մտափոխել՝ արտագաղթելուց:

Իսկ երրորդ հարցը ամուսնութեան եւ որդեծնութեան քանակի նւազումն է, քանի որ եթէ պակասեն նորաստեղծ ընտանիքների քանակը եւ նոր սերունդ լոյս աշխարհ գալը, վտանգւելու է թեմի ապագան:

Դարձեալ պէտք է ասեմ, որ վերոնշեալ բոլոր խնդիրների լուծման համար մեր թեմի ազգային իշխանութեան կողմից իրականացւում են մի շարք աշխատանքներ եւ տայ Աստուած, որ յաջողենք:

**Թեմի ժողովրդի վերաբերմունքը Ձեր նկատմամբ ինչպիսի՞ն է:**

Թեմի ժողովուրդն իմ նկատմամբ միշտ մեծ սէր ու յարգանք է ցուցաբերել: Վստահ եմ այսպիսի վերաբերմունք ունեցել է նաեւ ինձանից առաջ այստեղ ծառայած առաջնորդների նկատմամբ: Հոգեւոր առաջնորդի նկատմամբ այս թեմի ժողովրդի սէրն ու պատկառանքը բացառիկ է եւ անշուշտ գալիս է նրանց զօրաւոր հաւատից:

Կը յուսամ, որ երբեք այս վերաբերմունքը չի փոխուելու եւ խանգարիչ երեւոյթներ չեն առաջանալու ժողովուրդ-հոգեւոր առաջնորդ եւ ժողովուրդ-ազգային իշխանութիւն յարաբերութիւնների մէջ:

***Եթէ աւելացնելիք ունէք, խնդրեմ:***

Ընդհանրապէս մի շարք մարդկանց երեւակայութեան մէջ տպաւորուած է, թէ այս երկրից դուրս իրենց դրախտ է սպասւում, սակայն դա ճիշտ երեւակայութիւն չէ:

Որպէս հոգեւոր առաջնորդ խնդրում եմ մեր ժողովրից՝ չթողնել այս գեղեցիկ եւ թանկարժէք գաղութը եւ աղօթում եմ բարձրեալն Աստծուն, որ բոլոր արտագաղթերը դարձնի դէպի հայրենիք կատարող ներգաղթեր: Թող չստեղծի մի վիճակ, որ ինչպէս ժողովուրդն է ասում «Անձրեւից փախել ենք եւ կարկուտի ենք բռնւել»:

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՒ ԵՆԹԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Ազգային Առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը կազմակերպեց հարցազրոյց Թեմիս Կրօնական խորհրդի, Եկեղեցեաց վարչութեան եւ Քրիստոնէական Դաստիարակութեան խորհրդի ներկայացուցիչների հետ, որտեղ ներկայացուեց կազմերի աշխատանքային զեկոյցը:

## Կրօնական խորհրդի ատենապետ՝ պրն. Վարուժ Մովսիսեան

16-րդ Պատգ. Ժողովից ընտրուած Կրօնական Խորհուրդը նոյն կազմով շարունակել է իր աշխատանքը համաձայն Թեմի կանոնագրման սահմանուած Պարտականութիւնների շրջագծում փորձելով լաւագոյնս կատարել իր վրայ դրուած աշխատանքները.

-Հետեւել է հայ եկեղեցու եւ հոգեւոր կեանքի կազմակերպմանը, աշխոյժ պահելով ժողովուրդ-եկեղեցի կապը:

-Կեանքի կոչելով նախագծեր՝ հոգեւորականների եւ եկեղեցու սպասաւորների պատրաստման եւ որակաւորման նպատակով, այս ուղղութեամբ կազմել է քահանայեաց եւ դպիր-սարկաւագների դասընթացներ:

-Հետեւել է Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու օրէնքների, անձնական իրաւունքների (مقررات احوال شخصيه) անշեղ գործադրութեանը, մշակել նոր օրէնքներ եւ այժմէականեցրել առկայ օրէնքները:

-Կեանքի է կոչել ամուսնական գրանցման գրասենեակ համապատասխան պաշտօնեայով, իսկ ընտանեկան անհամաձայնութեանը եւ վէճերին վերահասու լինելու համար՝ հոգեւոր ատեան:

-Կրօնական Խորհրդի գրասենեակը, իր ընթացիկ աշխատանքների կողքին խնամքով պահում է Թեմում կատարուած մկրտութեան, ամուսնութեան եւ այլ կարգի վիճակագրութիւնները: Ընթացքի մէջ է բոլոր կարգի տոմարների թւայնացման աշխատանքը:

-Նշանակել է Եկեղեցեաց Վարչութիւն, որը զբաղւում է եկեղեցիների բարեզարդման եւ եկեղեցական կեանքը զարթ ու պայծառ պահելու աստուածահաճոյ գործին:

Կրօնական խորհրդին ենթակայ մարմինների գործունէութիւն՝

-Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդ եւ Կիրակնօրեայ Դպրոցը, որ զբաղւում են նոր սերնդի քրիստոնէական-հայեցի դաստիարակութեան պատասխանատու գործով եւ համայնքային կրօնական-բարոյական հարցերով:

-«Տաթեւ» երգչախումբը իր խմբավարով ու վարչութիւնով, ովքեր աշխատում են երիտասարդութեան մէջ ուսուցանել եւ տարածել եկեղեցական շարականները եւ աշխարհիկ երգ-երաժշտութիւնը:

-«Շուշանիկ» երգչախումբը, եկեղեցիների տիկնանց յանձնախմբերը, արժանապատիւ Քահանայ Հօր ու խմբավարի ջանքերի շնորհիւ փայլուն աշխատանք են տանում եկեղեցիների եւ համայնքի մէջ:

-Հոգեւոր եւ Վճռաբէկ ատեանները, որոնց հետ համախորհուրդ աշխատում ու փորձել ենք բարւօք լուծում առաջարկել ընտանեկան վէճերի եւ խնդիրների շուրջ:

-Փերիայ գաւառի երբեմնի հայաբնակ գիւղերի հայաթափման հետեւանքով լքւած-խոնարհւած եկեղեցիների բարեզարդման աշխատանքը տարւում է գիւղերի եկեղեցեաց վարչութեան միջոցով, ովքեր ամենայն բարեխղճութեամբ հետեւում են սոյն կարեւոր գործին:

-Փերիայ-Զհարմահալ գաւառների «Մշակութային ժառանգութեան պահպանման հաստատութեան» (میراث فرهنگی) համագործակցութեամբ, ծաւալուն աշխատանք են սկսել տեղի հայկական ժառանգութեան պահպանման, եկեղեցապատկան կալւածների գրանցման ասպարէզում:

Նշւած ծաւալուն աշխատանքային բնագաւառը բարեյաջող աւարտին հասցնելու համար, խորհրդին նեցուկ են հանդիսացել առաջին հերթին Թեմիս Առաջնորդ Սրբազան Հայրը՝ իր հայրական խրատներով ու յորդորներով, Շահինշահրի հոգեւոր Տեսուչը՝ իր մեղւաջան աշխատանքով, Պատգամաւորական Ժողովի Դիւանը՝ յանձինս ատենապետի, Թեմի Պատգամաւորների, Թեմական Խորհրդի եւ հաւատացեալ մշտարթուն ու գիտակից մեր պատւելի ժողովուրդը, որոնց յանուն ՍՀԹ Կրօնական Խորհրդի յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնները:

## Կրօնական խորհրդի փոխ-ատենապետ եւ Շահինշահրի Հայ Համայնքի հոգեւոր Տեսուչ՝ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեան

Սպահանի Հայոց Թեմի Շահինշահրի հայ համայնքի Կրօնական կեանքը առաւել եւս աշխուժացել է եւ ժողովրդի մասնակցութիւնը այս վերջին տարիներին դարձել՝ աւելի ուշագրաւ, պատճառն՝ համայնքի անդամների երկար տարիների երազանքի իրականացումն էր, որն էր «Սրբոց Վարդանանց» եկեղեցու նորոգութիւնը՝ ազգային իշխանութեան բարձր հովանաւորութեամբ:

Կրօնական բոլոր արարողութիւնները կատարւում են ընթացիկ կերպով: Նկատելի է երիտասարդների մասնակցութիւնը մանաւանդ կիրակնօրեայ ժամերգութիւններին:

Վերջին տարիների ընթացքում Սրբոց Վարդանանց տօնին հաստատւել է մատաղօրհնէքի արարողութիւն՝ եկեղեցու անւանակոչութեան տօնին զուգահեռ:

Շահինշահրում բնականոն կերպով, համագործակցութեամբ Շահինշահրի Կանանց Եկեղեցասիրաց միութեան տեղի է ունենում նաեւ «Սրբոց Կուսանանց» անւամբ Կանանց լսարան:

Շուտով սկսւելու է Կրօնական գիտելիքների ուսուցման դասընթացներ երիտասարդների եւ ուսանողների համար:

Շահինշահրում Կրօնական կեանքը վարում են Համայնքի հոգեւոր տեսուչը՝ աջակցութեամբ Տ. Սահակ քհնյ. Մինասեանի, հովանաւորութեամբ Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Տ. Սիփան եպս. Քէչէճեանի եւ անմիջական հետեւողականութեամբ՝ Կրօնական խորհրդի:

## Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան ատենապետ՝ պրն. Հենրիկ Յակոբեան

Մարմինս իր առաջին նիստը գումարել է 2017 թւականի օգոստոսի 26-ին՝ 9 հոգանոց կազմով:

-Սոյն ժամանակահատւածում բազմիցս կայացել է խորհրդակցական հանդիպումներ Թեմիս առաջնորդի եւ Կրօնական Խորհրդի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում արծարծւել են մի շարք մտահոգութիւններ եւ առաջարկներ:

-Կազմակերպել է նաեւ հանդիպումներ սարկաւագների, երէցփոխների եւ կանանց եւ հարիսայի պատրաստման յանձնախմբերի հետ, ուր քննարկել են բազմաթիւ խնդիրներ ու մտահոգութիւններ:

-Նոր Ջուղայի քահանահայրերը եւ սարկաւագները կատարել են իրենց հոգեւոր ծառայութիւնը:

-Պատշաճօրէն տօնել են բոլոր եկեղեցիների անւանակոչութեան տօները:

-Ս. Գէորգ Զօրավարի եւ Ս. Սարգիս Զօրավարի տօների առթիւ մատուցել է պատարագ, տեղի է ունեցել մատաղի զննման աշխատանքները եւ վերջում հաւատացեալներին է բաժանել հարիսայ:

-Նոր Ջուղայի բոլոր եկեղեցիներում կատարել են հարկ եղած նորոգութիւնները եւ հականեխումները:

-13 փետրուար 2018 թւականին տօնել է Տեառնընդառաջը նախ եկեղեցիներում, ապա՝ Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան շրջափակում: Կազմակերպել է հանդիպում-հիւրասիրութիւն Տ. Սիփան եպս. Քէչէճեանի, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ անցնող տարուայ ընթացքում ծնուած մանուկների, իրենց ծնողների եւ նորապսակների հետ ու յանձնել՝ նուէրներ:

-Գանձել են փոխան ծաղկեպսակի կատարուող բոլոր նուիրատուութիւնները:

-Հաւաքել է 2017 եւ 2018 թւականների համար նախատեսուած ծխական տուրքը:

-Բոլոր եկեղեցիների համար վերալիցքաւորել են կրակմարիչ անոթները:

## Քրիստոնէական Դաստիարակութեան խորհրդի ներկայացուցիչ՝ պրն. Թովմա Գալստանեան

Ս. Ա. Վանքի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհրդի եւ Կիրակնօրեայ դպրոցի գործունէութեան պատկերը անցնող մէկ տարուայ ընթացքում եղել է ըստ հետեւեալի.

**Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդ**

-Կազմակերպել է դասախօսական երեկոյ մասնակցութեամբ Գերպ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեան, Դկտ. Ռամին Ռադֆար, Դկտ. Մոհամմադ-Ռեզա Միռզայի, որոնք քննարկեցին հոգեւոր եւ առողջապահական թեմաներ:

-Կազմակերպել է հոգեւոր երգերի համերգ Ս. Ա. Վանքի Կոմիտաս եւ Տաթեւ երգչախմբերի, նաեւ անհատական երգիչների մասնակցութեամբ «Արարատ» Միութեան սրահում:

-Հրատարակել է «Եկեղեցին տան մէջ» ամսաթերթի 12 համարներ եւ իւրաքանչիւր համարի մանկա-պատանեկան բաժնի մրցոյթի մասնակիցներին վիճակահանութեամբ նուիրել ոսկէ խաչ:

**Նոր Ջուղայի Կիրակնօրեայ Դպրոց**

-2016-2017 տարեշրջանի փակման ներքին ծրագիրը տեղի է ունեցել մայիս ամսին, որտեղ սաներին յանձնուել է վկայագրեր:

-Նոր Ջուղայի Կիրակնօրեայ Դպրոցի 2017-2018 տարեշրջանի բացումը կատարուել է 13 դեկտեմբեր 2017 թւականին: Դպրոց են յաճախել Մանկապարտէզ-Նախակրթարանի եւ Տարրական բաժինների թւով 42 աշակերտ-ուհիներ:

-Կիրակնօրեայ դպրոցի դասընթացները բաղկացած են չորս բաժնից՝

ա. Կրօնական գիտելիքների ուսուցում, որ կատարւում են թեմիս Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի եւ Թեհրանի Հայոց Թեմի Քրիստոնէական բաժանմունքի հրատարակած գրքերի միջոցով

բ. Ձեռքի աշխատանքի պատրաստում, համաձայն դասաւանդուած նիւթերի

գ. Հոգեւոր երգերի եւ շարականների ուսուցում

դ. Կրօնական թեմաներով տեսաերիզի ցուցադրում

-Ամանօրեայ եւ Ս. Ծննդեան տօների առթիւ սաների համար կազմակերպել է ներքին ծրագիր բաղկացած

օրուայ թեմային առնչուող գիտելիքների մրցոյթից եւ խաղերից աւարտին սաները ստացան նուէրներ:

-Աշակերտութեանը եկեղեցու բաժինների, օգտագործող իրերի եւ զգեստների հետ ծանօթացնելու նպատակով պարբերաբար կատարւում են եկեղեցի այցելութիւններ:

# ԻՐԱՆԱՀԱՅ ԵՐԵՔ ԹԵՄԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ «ՊԱՏՈՒՀԱՆ» ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԸ ԿԱՅԱՑԱՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ, ուրբաթ՝ 2018 թւականի ապրիլի 6-ին, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում կայացաւ «Պատուհան» խորագիրը կրող ճանաչողական ֆորումը, որին իրենց մասնակցութիւնն էին բերել 17-ից 35 տարեկան շուրջ 120 երիտասարդներ՝ Թաւրիզից, Ուրմիայից, Թեհրանից, Շահինշահրից եւ Նոր Ջուղայից:

Սոյն ֆորումի կազմակերպման մտայղացումն առաջացել էր 2017 թւականի հոկտեմբերին Նոր Ջուղայում կայացած միջթեմական երիտասարդական խորհրդաժողովում հնչած առաջարկների եւ ազգային իշխանութիւնից մասնակիցների ակնկալիքների հիման վրայ՝ նպատակ ունենալով՝ երիտասարդների համար ստեղծել յոյսի պատուհան եւ եռանդ իրենց ապագայի նկատմամբ, կապւածութիւն համայնքին, ազգին եւ հայրենիքին, խթան հանդիսանալ նրանց հեռանկարի ձեւաւորմանը՝ իրենց մասնագիտութիւնների եւ հետաքրքրութիւնների հիման վրայ եւ օգտակար լինել նրանց որոշակի հմտութիւններ ու կարողութիւններ ձեռք բերելու եւ համայնքային ու ազգային կեանքում դերակատարութիւն ունենալու համար:

Միջոցառման պաշտօնական բացման բաժնում, որը տեղի ունեցաւ առաւօտեան ժամը 9:30-ին, հնչեց խորհրդաժողովի հիմնը, կազմակերպիչ յանձնախմբի խօսքով հանդէս եկաւ Անասիկ Ծառուկեանը, ուր հիմնականում անդրադարձաւ ծրագրի կազմակերպման նպատակներին եւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ արտասանւեց «Տէրունական աղօթք»-ը:

Յաջորդիւ երիտասարդութեան զարգացման եւ ազգային կեանքում նրանց ներգրաւածութեան ուղղութեամբ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախագծի մասին ընդհանուր ծանօթացումներ տուեցին նոյն խորհրդի անդամներ Սոնիկ Բաղումեանն ու դոկտ. Նորայր Թումանեանը, իսկ ֆորումի նախապատրաստական աշխատանքների ու ծրագրի մասին բացատրութեամբ հանդէս եկաւ մեդիա դաշտի մասնագէտ, ՀՀ հանրային հեռուստատեսութեան արտաքին բաժնի կապերի ղեկավար եւ սոյն ֆորումի համակարգող Էրիկ Անթառանեանը:

Այս ծրագրի համար Հայաստանից հրաւիրուել էին տեղեկատւական տեխնոլոգիաների, մեդիա դաշտի, կիբեռ անվտանգութեան եւ կառավարման բնագաւառների փորձառու մասնագէտներ եւ կենտրոնների ղեկավարներ՝ Արաքսիա Մարտիրոսեանը, Սամուէլ Մարտիրոսեանը, Ամալիա Ղարաքեշիշեանը եւ Իզաբելլա Մանասարեանը: Մասնագէտներն առանձին ելոյթներ ծաւալեցին իրենց ոլորտի վերաբերեալ, ապա վարեցին նախատեսւած աշխատանոցները:

Յանձնախմբի հրաւէրով Նոր Ջուղա էր ժամանել նաեւ «Ալիք» օրաթերթի կայքի խմբագիր Արամ Շահնազարեանը, որը պրն. Անթառանեանի հետ միասին օժանդակեց մասնագէտներին աշխատանոցներն առաւել աշխոյժ վարելու գործում:

Ծրագրում նախատեսւել էին թւով 10 աշխատանոցներ, որոնք մեծ հետաքրքրութիւն առաջացրին մասնակից երիտասարդների մօտ:

Մասնագէտները վարեցին հետեւեալ խորագրերով աշխատանոցները.

Արաքսիա Մարտիրոսեանը՝ «Ինչպէ՞ս գործ գտնեմ ֆինանսների եւ հաշւապահական բնագաւառներում», «Ինչպէ՞ս ստեղծեմ սեփական գործս» եւ «Ինչպէ՞ս դառնամ միջազգային որակաւորում ունեցող կառավարիչ», Սամուէլ Մարտիրոսեանը՝ «Կիբեռ անվտանգութեան հիմունքները» եւ «Մեդիաների ապագայ զարգացումները», Ամալիա Ղարաքեշիշեանը՝ «Գիւմրի տեխնոպարկ», Իզաբելլա Մանասարեանը՝ «Նախագծերի կառավարում» եւ «Ինչպէ՞ս ստանալ նախագծերի կառավարման միջազգային որակաւորում», իսկ Էրիկ Անթառանեանը՝ «Կրթական ժամանցային կենտրոն» եւ «Թումո»:

Աշխատանոցների ընթացքում թէժ զրոյցներ ծաւալեցին մասնակիցների միջոցով, ուր հնչեցին տե-

սակէտներ, հարցեր, մտահոգութիւններ եւ առաջարկներ:

Յատկանշական է, որ սոյն միջոցառման կազմակերպական աշխատանքն ի կատար էր ածել ամբողջութեամբ թեմիս երիտասարդներից կազմուած յանձնախմբի միջոցով:

Բացման ծրագրին ներկայ էին նաեւ Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, հայոց դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչներն ու ժողովուրդ:

## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ ՍՊԱՀԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, Պատգամաւորական ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր Վարուժ Մինասեանը եւ Վարուժ Մովսիսեանը, Իրանական նոր տարւայ՝ Նոռուզի առթիւ, կիրակի՝ 8 ապրիլ 2018 թւականի առաւօտեան այցելեցին Սպահան Նահանգի Ոստիկանութիւն, ուր հանդիպելով գլխաւոր պետ Մասում Բէյգիի հետ շնորհաւորանքներ եւ բարեմաղթանքներ յղեցին նոր տարւայ կապակցութեամբ:

## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԵԿՈՅՑԸ՝ ԹԵՄԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի Դիւանի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ 2018 թւականի ապրիլի 11-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ ժողովրդական հանդիպում, ուր թեմիս Թեմական եւ Կրօնական խորհուրդները զեկոյցով հանդէս եկան իրենց կատարած միամեայ գործունէութեան շուրջ:

Աւելի քան երկու ժամ տեւողութեամբ այս հանդիպման ընթացքում պաստառի վրայ ցուցադրուեցին տեսանիւթի վերածուած զեկոյցները, որտեղ համապատասխան լուսանկարներով, ֆիլմերով եւ սպառիչ բացատրութիւններով արտացոլուած էր գործադիր մարմինների գործունէութիւնը՝ ազգային ու հոգեւոր կեանքի, կրթական, բարեսիրական եւ կալուածական բնագաւառների, երիտասարդների ու ուսանողների դժուարութիւնների եւ ընտանիքների բնակարանային ու աշխատանքային խնդիրների փարատման, ինչպէս նաեւ միութիւններում կատարած ներդրումների կապակցութեամբ:

Զեկոյցներում առանձնաբար անդրադարձ էր կատարուել նաեւ նշուած խորհուրդներին ենթակայ մարմինների գործունէութեանը, թեմի շրջաններում հա-

մայնքային կեանքին եւ արտաքին ճակատում հաստատած յարաբերութիւններին:

Վերջում թեմի Պատգ. Ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանի գլխաւորութեամբ Թեմական խորհրդի ատենապետ Վարուժ Մինասեանն ու փոխ-ատենապետ Վաչիկ Հայրապետեանը եւ Կրօնական խորհրդի ատենապետ վարուժ Մովսիսեանն ու անդամ Սարօ Դիլանչեանը պատասխանեցին ներկաներին յուզող հարցերին:

Երեկոյին ներկայ էին՝ Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների անդամները, քահանայից դասի ու շրջանի Հայ Դատի ներկայացուցիչներն ու Նոր Ջուղայի եւ Շահինշահիր հայ համայնքների ժողովուրդը:

Ծրագիրը վարեց Թովմա Գալստանեանը:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆ

Երկուշաբթի՝ ապրիլի 30-ի առաւօտեան, Ս. Ա. Վանքի պատուիրակութիւնը գլխաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Սիփան եպս. Քէչէճեանի, այցելեց Սպահանի նահանգապետ՝ Մոհսէն Մեհր-Ալիզադէին:

Առաջնորդարանի պատուիրակութեանը մաս էին կազմում Պատգամաւորական ժողովի ու Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետներ՝ Թաթուլ Օհանեանը, Վարուժ Մինասեանը եւ Վարուժ Մովսիսեանը եւ Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը:

Առաջնորդարանի պատուիրակութիւնը ներկայացրեց առաջիկայի համար նախատեսուած նախագծերը, որոնց շարքում են՝ հիւրանոցի եւ երիտասարդների համար բնակարանների կառուցումն ու հնաոճ տների գործառոյթի փոփոխումը՝ տուրիստականի:

Նահանգապետն իր հերթին գնահատեց նմանատիպ ծրագրերի գործադրումը եւ խոստացաւ ըստ հնարաւորին սատար հանդիսանալ աշխատանքները դիւրին ընթանալու գործին:

## ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐԻ ՀԱՄԵՐԳ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ եւ Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի կազմակերպութեամբ, չորեքշաբթի՝ մարտի 7-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ հոգեւոր երգերի համերգ, ուր ընդգրկուած էին տաղեր, շարականներ, մեղեդիներ եւ հոգեւոր երգեր:

Ծրագրի իրականացման գործում համերգի ղեկավար, Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի եւ կազմակերպիչների հետ սերտ համագործակցութիւն էին ցուցաբերել Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի խմբավար Արմէն Ամիրխանեանը, Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախմբի ղեկավար մայեստրօ Համիկ Ալեքսանդրեանը, նշուած զոյգ երգչախմբերի մեներգիչներից եւ անհատ կատարողներ:

Երեկոն բացուած յայտարարուեց Քրիստոնէական Դաստիարակութեան խորհրդի անդամ Թովմա Գալստանեանի ողջոյնի եւ բացման խօսքերով, ով ընթացքում հանդէս եկաւ նաեւ հոգեւոր ու եկեղեցական երգերի մասին բացատրութիւններով:

Գեղարուեստական ելոյթների բացումն ու փակումը կատարեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը «Ամենակալ» եւ «Որդիս» երգերի կատարումներով:

Առաջին երգի ընթացքում Հայր Սուրբին ընկերակցեց Թադէ Պօղոսեանը՝ դաշնամուրի նւագակցութեամբ:

Վրոնշեալի նւագակցութեամբ հնչեցին նաեւ «Հաւուն հաւուն»-ը Նարբէ Գրիգորեանի ու «Մայր եւ կոյսը»-ը Այլին Քեշիշեանի կատարումներով:

Մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի դաշնամուրի նւագակցութեամբ հնչեցին «Տաղ Սուրբ Մեսրոպայ» երգը Ասպետ Մարգարեանի, «Ալէլուիա»-ն Սիւնէ Յարութիւնեանի ու Արփի Դիլանչեանի եւ «Տաղ Յարութեան»-ը Արեգա Յարութիւնեանի միջոցով:

«Օրհներգ Հայրապետական» երգը կատարեց Արա սրկ. Բաղումեանը, դաշնակահար Նայիրա Ալեքսանեանի ընկերակցութեամբ:

Հնչեցին նաեւ «Շնորհակալութիւն», «Երգ ուխտի», «Սրբութեան փառքիդ խորանը», «Խաչի մօտ» եւ «Տիրամօր գովքը» հոգեւոր երգերը՝ հերթաբար Վանանդ Իսաղուլեանի, Մինելի Յակոբեանի, Վանա Շիրւանեանի, Հարմա Կարապետեանի եւ Թանիա Մինասեանի կատարումներով:

Հոգեւոր երգերի գործիքաւորումն իրականացրել էր Հարմա Կարապետեանը:

Որպէս եզրափակիչ խօսք իր հայրական պատգամը փոխանցեց Սպահանի հայոց թեմի առաջնորդը:

Ծրագրին ներկայ էին քահանայից դասը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների եւ հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչներն ու հոծ թւով ժողովուրդ:

## ԾԱՂԿԱԶԱՐԴ ՏՕՆԻ ԵՒ ԴՌՆԲԱՑԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ծաղկազարդը՝ Քրիստոսի Երուսաղէմ կատարած յաղթական մուտքի յիշատակման տօնը՝ հանդիսութեամբ նշուեց Նոր Ջուղայի «Ս. Մինաս», «Ս. Ստեփանոս», «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» եւ «Ս. Յովհաննու Կարապետ» ու Շահինշահիր «Սրբոց Վարդանանց» եկեղեցիներում, կիրակի՝ մարտի 25-ի առաւօտեան:

Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն այցելելով Շահինշահիր՝ տօնի առթիւ ս. եւ անմահ պատարագ մատուցեց «Սրբոց Վարդանանց» եկեղեցում, որին մասնակցում էին նաեւ նոյն համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը եւ սարկաւագաց դասը:

Յաւարտ Սուրբ Պատարագի, եկեղեցու բակում տեղի ունեցաւ Ծաղկազարդի աւանդական թափօրը, ապա Շահինշահիրի Հայ Կանանց եկեղեցասիրաց միութեան անդամների ձեռամբ զարդարուած ձիթենու ճիւղերն օրհնեցին եւ բաժանեցին ներկայ հաւատացեալներին: Վերջում իրականացուեց մանուկների օրհնութեան կարգը:

Պատարագի ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Շահինշահիրի «Նարեկ» երգչախումբը:

Նոյն օրը երեկոյեան, Դոնբացէքի արարողութիւնը մատուցեց Նոր Ջուղայի «Ս. Մինաս», «Ս. Ստե-

փանոս», «Ս. Աստուածածին» եւ «Ս. Յովհաննու Կարապետ» ու Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցիներում: «Ս. Յովհաննու Կարապետ» եկեղեցու կարգը տեղի ունեցաւ թեմական առաջնորդի նախագահութեամբ եւ կատարողութեամբ: Արարողութեանը մասնակցում էին նաեւ արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանն ու սարկաւագաց դասը:

«Սրբոց Վարդանանց» եկեղեցում արարողութիւնը մատուցեց Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ եւ կատարողութեամբ. ժամերգութեանը մասնակից էր նաեւ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը:

Երգեցողութեամբ հանդէս եկան «Շուշանիկ» երգչախմբի անդամուհիները՝ Նոր Ջուղայում եւ «Նարեկ» երգչախումբը՝ Շահինշահրում: Բոլոր արարողութիւններին ներկայ էին հոծ թւով հաւատացեալներ:

## ՏԱՍԸ ԿՈՅՍԵՐԻ ԱՌԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐԻԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐՎԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Երեքշաբթի՝ 2018 թւականի մարտի 27-ի երեկոյեան, Նոր Ջուղայի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ», «Ս. Ստեփանոս», «Ս. Յովհաննու Կարապետ» եւ «Ս. Մինաս» եկեղեցիներում տեղի ունեցաւ եկեղեցական արարողութիւն՝ Տասը կոյսերի առակի յիշատակի օրւայ առթիւ:

«Ս. Գրիգոր Լուսաւորիչ» եկեղեցու կարգը իրականացուեց Սպահանի հայոց թեմի առաջնորդի նախագահութեամբ ու կատարողութեամբ եւ արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի ու սարկաւագաց դասի մասնակցութեամբ:

Յատկանշական է, որ առակը մարմնաւորող օրիորդների մասնակցութիւնն ապահովելու հարցում Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի հետ համագործակցել էր Նոր Ջուղայի հայոց ազգ. «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի տնօրինութիւնը:

## ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

2018 թւականի մարտի 29-ի առաւօտեան, Աւագ հինգշաբթի՝ Յիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի յիշատակի օրւայ առթիւ ս. եւ անմահ պատարագ մատուցեց Նոր Ջուղայի «Ս. Ստեփանոս» եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի: Պատարագը մատուցեց արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի ձեռամբ եւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի երգեցողութեամբ: Մասնակցում էին նաեւ եկեղեցական դասը:

Օրւայ խորհրդին հաղորդ դառնալու համար՝ ժողովրդից բացի՝ ներկայ էին հայոց ազգ. «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի 5-րդ եւ 6-րդ դասարանների սաներն ու «Քանանեան» եւ «Կատարինեան» միջնակարգ դպրոցների աշակերտները՝ տնօրինութիւնների եւ ուսուցչական կազմերի ուղեկցութեամբ:

Աւագ հինգշաբթի՝ երեկոյեան ժամը 5:00-ին, «Ս. Ներսէս», «Ս. Գրիգոր Լուսաւորիչ», «Ս. Յովհաննու

Կարապետ» եւ «Ս. Ստեփանոս» եկեղեցիներում տեղի ունեցաւ Ոտնլուայի կարգը: «Ս. Ներսէս» եկեղեցու արարողութիւնը մատուցեց գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ եւ կատարողութեամբ. մասնակցում էին նաեւ արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանն ու սարկաւագաց դասը:

Կրօնական խորհրդի մտայղացմամբ եւ յատուկ դասաւորութեամբ, ՀՀ 100-ամեակի առիթով «Ս. Ներսէս» եկեղեցում առաջնորդ Հայր Սուրբը լաց ազգային մարմինների ներկայացուցիչների ոտքերը, իսկ միւս եկեղեցիներում քահանայ հայրերը՝ հայոց ազգ. «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի սաներինը. աշակերտների մասնակցութիւնն ապահովելու համար խորհրդի հետ սերտ համագործակցութիւն էր ցուցաբերել դպրոցի տնօրինութիւնը:

Նոյն երեկոյ, աւելի ուշ՝ ժամը 7:30-ին, «Ս. Ստեփանոս» եկեղեցում, թեմական առաջնորդ Հայր Սուրբի նախագահութեամբ եւ արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի մասնակցութեամբ տեղի ունեցաւ Խաւարման հսկումի կարգը:

Խաւարման արարողութիւնն իրականացուեց նաեւ «Ս. Յովհաննու Կարապետ», «Ս. Մինաս» եւ «Ս. Աստուածածին» եկեղեցիներում:

Աւագ ուրբաթ՝ մարտի 30-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Ս. Ստեփանոս եկեղեցում, գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ ու կատարողութեամբ եւ եկեղեցական դասի մասնակցութեամբ, Քրիստոսի գերեզմանը խորհրդանշող ծաղիկներով զարդարուած սեղանի առջեւ կատարուեց երեկոյեան արարողութիւն՝ Յիսուս Քրիստոսի չարչարանքների եւ խաչելութեան յիշատակի օրը նշելու համար:

Վերջում հաւատացեալները մօտենալով խորհրդանշական գերեզմանին՝ վերցրին այնտեղի ծաղիկներից, որպէսզի դրանց միջոցով իրենց բնակարանները ողողեն Քրիստոսի կողմից շնորհուած նոր կեանքի բոյրով:

Թաղման կարգի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ:

Բոլոր արարողութիւններին ներկայ էին հոծ թւով ժողովուրդ:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՆՇԻԵՑԻՆ Ս. ԶԱՏԿԻ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ԵՒ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԸ

Ս. Զատկի Ճրագալոյցին, շաբաթ՝ 2018 թւականի մարտի 31-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ եւ արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի ձեռամբ ս. եւ անմահ պատարագ մատուցեց «Ս. Յովհաննու Կարապետ» եկեղեցում: Երգեցողութեամբ հանդէս եկաւ «Շուշանիկ» հոգեւոր երգչախումբը:

Ընթացքում թեմական առաջնորդի միջոցով ընթերցուեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Ս. Յարութեան տօնի պատգամը՝ «Քրիստոսի յարութիւնը՝ մարդու ազատագրումը մեղքից» խորագրով:

Վերջում ներկաներն ստացան Քրիստոսի հրաշափառ յարութեան աւետիսը:

Սոյն տօնի առթիւ ս. եւ անմահ պատարագ մատուցեց նաեւ «Ս. Ստեփանոս», «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» եւ «Ս. Ներսէս» եկեղեցիներում:

Յաջորդ օրը, կիրակի՝ ապրիլի 1-ի առաւօտեան

ժամը 10:00-ին, Փրկչի յաղթական Յարութեան տօնի՝ Ս. Զատկի առթիւ, ս. եւ անմահ պատարագ մատուցեց «Ս. Յովհաննու Կարապետ», «Ս. Մինաս», «Ս. Աստուածածին» եւ «Ս. Ստեփանոս» եկեղեցիներում:

«Ս. Ստեփանոս» եկեղեցու պատարագիչն ու քարոզիչն էր թեմական առաջնորդ Հայր Սուրբը. մասնակցում էր նաեւ արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը: Երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Յատկանշական է, որ բոլոր արարողութիւններին խուռներամ մասնակցութիւն ցուցաբերեց Նոր Ջուղայի հաւատացեալ ժողովուրդը:

Կիրակի՝ երեկոյեան ժամը 6-ից, Ս. Ամենափրկիչ վանքի Ծաղկեայ դահլիճում, գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն ընդունեց ազգայինների եւ համայնքի անդամների շնորհաւորանքները՝ տօնի կապակցութեամբ:

## ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՓԵՐԻՈՅ «ԼՈՒՍԱՀԱՆԳԻՍՏ» ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ

Ուրբաթ՝ 2018 թւականի ապրիլի 13-ի առաւօտեան, Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ, Փերիա գաւառի Ներքեւի Խոյգան գիւղի մօտակայքում, բլրի վրայ գտնուող «Լուսահանգիստ» սրբավայրում, ուր գտնւում է հաւատի ճանապարհին նահատակուած Գրիգոր Արփայեցիի շիրիմը, Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ տեղի ունեցաւ ամենամեայ հոգեհանգստեան կարգը:

Կրօնական արարողութիւնից յետոյ Հայր Սուրբն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին:

Վերջում ուխտաւորներն աղօթեցին, մոմ վառեցին եւ խունկ ծխեցին նահատակ սրբի գերեզմանի վրայ, ապա գարնանային անձրեւոտ, սակայն հաճելի օրը վայելեցին բնութեան գրկում:

Հոգեհանգստեան կարգին մասնակցում էին նաեւ արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը եւ սարկաւագաց դասը: Ներկայ էին՝ Կրօնական խորհրդի անդամներ՝ Սաքօ Տէր-Յովհաննիսեանն ու Սարօ Դիլանչեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ ու հոծ թւով ժողովուրդ:

## «ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆՆ ԱՅՍՕՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Նոր Ջուղայի Հայ Դատի գրասենեակի նախաձեռնութեամբ, ուրբաթ 2018 թւականի մարտի 9-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ՝ «Թուրքիայի իշխանութիւնները եւ հայութեան կացութիւնն այսօր» խորագրով: Որպէս դասախօս հրաւիրուել էր քաղաքական փորձագէտ, թուրքագէտ եւ «Պայման» պարբերաթերթի խմբագրական կազմի անդամ Գրիգոր Ղազարեանը:

Սկզբում Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը զեկոյցով հանդէս եկաւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի կողմից շուրջ մէկ տարի առաջ հիմնադրուած Նոր Ջուղայի Հայ Դատի գրասենեակի կատարած աշխատանքների մասին:

Շարունակութեան մէջ երեկոյի դասախօսը անդրադարձաւ թեմային եւ վերջում պատասխանեց հարցերին:

Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, քահանայից դասի, շրջանի Հայ Դատի յանձնախմբի ու ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ ժողովուրդ:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՇԻՐԱԶՈՒՄ

Ուրբաթ՝ 2018 թւականի ապրիլի 20-ի առաւօտեան, Շիրազի «Հայ տուն»-ում, տեղի հայ համայնքի ներկայութեամբ իրականացուեց դասախօսական ծրագիր, Նոր Ջուղայի Հայ Դատի գրասենեակի նախաձեռնութեամբ :

Օրուայ դասախօսն էր Թեհրանից ժամանած քաղաքական փորձագէտ, թրքագէտ եւ «Պայման» պարբերաթերթի խմբագրական կազմի անդամ Գրիգոր Ղազարեանը, ով դասախօսական ելոյթ ունեցաւ «Թուրքիայի իշխանութիւնները եւ հայութեան կացութիւնն այսօր» թեմայի շուրջ:

Սկզբում Նոր Ջուղայի Հայ Դատի գրասենեակի անունից ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Ժորժիկ Մատթէոսեանը:

Այնուհետեւ Գրիգոր Ղազարեանը թեմայի մասին արտայայտուեց:

Վերջում դասախօսը պատասխանեց ներկաներին յուզող հարցերին:

## Հ.Յ.Դ. «ՌՈՒԲԷՆ» ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԻՐԱՆԱԿԱՆ «ՆՈՈՒՈՒՋ» ՏՕՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՈՂ ԳՐՔԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔԸ ԲՈԼՈՐԵՑ ԻՐ 20-ԱՄԵԱԿԸ

1998 թւականից ի վեր, ամենամեայ կարգով, իրանական «Նոոուզ» տօնի արձակուրդների ընթացքում, Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութիւնը (ՌԵՄ) Հայ Դատի քարոզչութեան ուղղութեամբ իր աշխատանքների ծիրում, Ս. Ամենափրկիչ վանքի շրջափակում կազմակերպում է գրքի ցուցահանդէս-վաճառք, որը մեծ ընդառաջում է գտնում վանքի թանգարան այցելող պարսիկ եւ օտարերկրացի հոծ զբօսաշրջիկների կողմից: Գրքերի մեծ տոկոսը կազմում են Հայոց Ցեղասպանութեան եւ Հայ Դատի թեմաներով գրական գործերը:

«Ռուբէն» երիտ. միութեան անդամներն անցնող 20 տարիների ընթացքում սիրայօժար կերպով իրենց արձակուրդն ու հանգստեան օրերը տրամադրել են այս գործին եւ ընձեռուած հիանալի առիթը լաւապէս օգտագործել՝ հայկական հարցի ճանաչեցման ուղղութեամբ:

Նրանք ցուցադրում եւ վաճառում, իսկ որոշ պարագաներում անվճար տրամադրում են հայութեանը ծանօթացնող, ինչու չէ նաեւ Հայոց Ցեղասպանութեան պատմական ծալքերն արտացոլող ու Հայ Դատին առնչւող գրքերը եւ հրատարակութիւնները: Դրան զուգահեռ պատասխանում են Հայաստանի, հայ ժողովրդի եւ Մեծ Եղեռնի մասին՝ զբօսաշրջիկների հարցերին:

ՌԵՄ-ի վարչութեան եւ սոյն ցուցահանդէսի կազմակերպիչ յանձնախմբի աշխատանքն սկսում է դեռ արձակուրդից շատ աւելի առաջ՝ համապատասխան թեմաներով նոր տպագրուած գրքեր հայթայթելով եւ ցուցահանդէսն աւելի բովանդակալից ու գրաւիչ կազմակերպելու ուղղութեամբ հարկ եղածը նախաձեռնելով:

Յատկանշական է, որ այս տարի առաջին անգամը լինելով միութիւնը համագործակցութիւն ցուցաբերեց Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում բարեսիրական աշխատանքներ իրագործող Թեհրանի «Թեւանիկ» խմբի հետ: Սոյն համագործակցութեան շրջագծում ՌԵՄ-ի վարչութիւնը «Թեւանիկ»-ից ստանալով Արցախի արուեստագէտների ձեռքի աշխատանքները՝ իր ցուցահանդէս-վաճառքում մի առանձին կրպակ յատկացրեց այդ գործերի վաճառման համար:

Վարձքներդ ի կատար ասելով այս անխոնջ երիտասարդներին՝ առաւել եռանդ ու կորով ենք մաղթում նրանց՝ հայանպաստ ու հայրենանպաստ աշխատանքներում:

## ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՕՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի սաների հայեցի դաստիարակութեան ուղղութեամբ, իւրաքանչիւր ուսումնական տարեշրջանում դպրոցի տնօրինութեան, ուսուցչական կազմի ու ծնողական խորհրդի համատեղ ջանքերի շնորհիւ կազմակերպւում են մի շարք միջոցառումներ, որոնցով սաներին առաւել ծանօթացնում եւ հաղորդ են դարձնում ազգային ու հոգեւոր տօներին եւ արժէքներին:

Այս ծիրում 2018 թւականի առաջին օրերից մինչեւ այսօր իրականացւել են մի շարք ծրագրեր, որոնց ստորեւ ներկայացնում ենք.

Հինգշաբթի՝ յունուարի 4-ի առաւօտեան դպրոցի կողմից ձեւաւորւած գեղեցիկ աւանդութեան համաձայն, մանկապարտէզի Դեղին խմբակի սաները պատկան պատասխանատուների ընկերակցութեամբ այցելեցին հայոց ազգ. ծերանոց՝ այնտեղում բնակւող տատիկ-պապիկներին Նոր տարւայ եւ Ս. Ծննդեան տօնի առթիւ իրենց ջերմ շնորհաւորանքները փոխանցելու համար:

Մանուկներին Վարդանանց յաղթանակի օրւան եւ հայոց քաջարի զօրավարի հերոսութիւններին ծանօթացնելու նպատակով՝ չորեքշաբթի փետրուարի 7-ի առաւօտեան տնօրինութեան հրաւէրով դպրոց այցելեց հայոց ազգ. «Արմէն» տարրական կրթահամալիրի ուսուցչուհի Սքարլետ Հայրապետեանը, որը երեխաներին բացատրեց պատերազմի եւ խիզախ սպարապետի մասին, իսկ աւելի ուշ այցելեց նաեւ «Վարդան զօրավար»-ը, ով մեծ ոգեւորութիւն պատճառեց փոքրիկներին:

Բուն Բարեկենդանը նշանաւորւեց շաբաթ՝ փետրուարի 10-ի առաւօտեան՝ գեղեցիկ անակնկալներով ողողւած միջոցառմամբ: Աշակերտներն ընդունել էին ծիածանի կերպար՝ համապատասխան դիմայարդարմամբ ու գլխարկներով:

Տեառնընդառաջի նախատօնակը նշւեց երեքշաբթի՝ փետրուարի 13-ի առաւօտեան դպրոցի շրջափակում: Այդ օրը դպրոց այցելեցին արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանն ու բրշ. Ալբերտ սրկ. Ղազարեանը: Նախ հնչեցին տօնին առնչւող շարականներն ու «Տէրունական աղօթք»-ը, այնուհետեւ դպրոցի կրտսերագոյն եւ աւագ աշակերտները քահանայ հայրերի հետ միասնաբար բոցավառեցին զարդարւած աւանդական թուփը:

## ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝ Ն. Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ՈՒ ՏԱՏԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Մայրութեան եւ գեղեցկութեան տօնին նւիրւած գողտրիկ միջոցառմամբ մեծարւեցին Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի սաների մայրերն ու տատիկները, կիրակի՝ 2018 թւականի ապրիլի 8-ի երեկոյեան, Ն. Ջ. հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում: Նախաձեռնութիւնը պատկանում էր դպրոցի տնօրինութեանը,

ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին:

Երեկոն սկիզբ առաւ ծնողական խորհրդի ադնամուհիներ Արազ Դաւթեանի ու Նոռա Մանուկեանի միջոցով՝ մօրը ձօնուած գեղեցիկ խօսքերով ու մաղթանքներով եւ յատկապէս մայրական սէրը գովերգող ու հայ մայրերի յատկանիշներին անդրադարձող բանախօսական ելոյթով:

Ցուզիչ ելոյթին յաջորդեց մանկական երգերով ու արտասանութիւններով յագեցած ծրագիրը. մանկապարտէզի Վարդագոյն եւ Դեղին խմբակների, ինչու չէ նաեւ նախակրթարանի աշակերտները, բեմ ելնելով, իրենց որդիական սէրն ու երախտագիտութիւնը յայտնեցին երգերի ու արտասանութիւնների բառերի ներքոյ:

Ծրագրի շարունակութեան մէջ դպրոցի տնօրինուհի Քառոլին Դիլանչեանը ներկաներին փոխանցեց իր ջերմ շնորհաւորանքները՝ տօնի առթիւ, ապա մայրերի մասնակցութեամբ իրականացուեցին մրցոյթներ, որոնց արդիւնքում պարգեւատրուեցին յաղթողները:

Երեկոն աւարտուեց հիւրասիրութեամբ, եւ մայրերին նուիրուեցին յուշանուէրներ:

## Ն. Զ. ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան օրիորդաց բասկետբոլի երէց խումբը, սուպեր լիգայի Բ. կարգի մրցոյթներում յաղթանակ է արձանագրել:

2017 թւականի հոկտեմբերից մինչեւ 2018 թ. փետրուարի 23-ը ընկած ժամանակահատուածում տեղի ունեցաւ երկրի մակարդակի կանանց բասկետբոլի սուպեր լիգայի Բ. կարգի մրցաշարը: Փետրուարի 23-ի վերջին խաղին ներկայ է եղել երկրի Կանանց բասկետբոլի ֆեդերացիայի փոխտնօրէն Ֆարիդէ Շոջային, ով մեդալաբշխման հանդիսութեան ընթացքում առանձնապէս բարձր է գնահատել «Արարատ» միութեան հաւաքականի կարողութիւնները եւ նշել, որ «Արարատ»-ը լինելով կրօնական փոքրամասնութեան հաւաքական, այս մրցաշարում հանդէս է եկել, որպէս Սպահան նահանգի միակ ներկայացուցիչ եւ շնորհաւորանքի խօսք է ասել մարզուհիներին, մարզիչին եւ պատասխանատուներին:

Շնորհաւորելով «Արարատ» միութեան օր. բասկետբոլի անձնակազմին, առողջութիւն եւ առաւել յաջողութիւններ ենք մաղթում մարզական ասպարէզում:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՆՈՐԱՄՈՒՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ

Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Ուսանողական միաւորի վարչութիւնը, ուրբաթ՝ մարտի 2-ի երեկոյեան, նոյն միութեան յարկի ներքոյ ընդունեց ուսումնական ընթացիկ տարեշրջանում ուսումնական բարձրագոյն հաստատութիւններում մուտք գործած ուսանողներին:

Հանդիպման աւարտին, ուսումնական բարձրագոյն հաստատութիւններում ընդունուած նորամուտ ուսանողներին յանձնուեց գնահատագրեր:

# ԻՐԱՆԱՀԱՅ 30-ՐԴ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՆ ՄԱՐՏԻ 20-ԻՑ 25-Ը՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեան, Իրանահայ Գարնանային յոբելեանական 30-ամեայ խաղերի հանդիսաւոր բացումը, ներկայութեամբ Թեհրանի եւ Սպահանի պաշտօնական հայ եւ պարսիկ հրաւիրեալների, մարզական պատուիրակութիւնների, միութենականների եւ հոծ բազմութեան տեղի ունցաւ երեքշաբթի՝ թւականիս մարտի 20-ի ժամը 20:30-ին, նոյն միութեան մարզասրահում:

Խաղերը նւիրւած էին Գարնանային խաղերի 30-ամեակին եւ Նոր Ջուղայի մարզական աշխարհին:

Ներկաներին հայերէն եւ պարսկերէն լեզուներով ողջունեց օրւայ հանդիսավարուհի՝ Մանիա Ղուկասեանը, որից յետոյ Սկաուտական միաւորի Ա-րի-Արենուշական հատւածի եւ Երէց փաղանգի ներկայացուցիչների մասնակցութեամբ կատարւեց դրօշակի արարողութիւն եւ ներկաների յոտնկայս ունկնդրութեամբ հնչեց Իրանի Իսլ. եւ Հայաստանի Հանրապետութիւնների օրհներգերը, ապա տեղի ունեցաւ մարզական պատուիրակութիւնների տողանցք-շքերթը:

Այնուհետեւ ցուցադրւեց տեսանիւթ, որով ներկայացւեց ուրբաթ՝ մարտի 16-ին, Ս. Ամենափրկիչ Վանքում տեղադրւած Հայոց Ցեղասպանութեան Սրբոց Նահատակաց յուշարձանի առջեւ կայացած Ջահավառութեան արարողութիւնը, որին յաջորդեց ջահակիր խմբի մուտքը դահլիճ, որին մաս էին կազմում

2014-թւականից ի վեր որպէս գլխաւոր ջահակիր ներկայացւած յաջողակ մարզիկներն ու մարզիչները: Ջահակիր խմբի անդամներին ներկայացնելուց յետոյ խաղերի խորհրդանշական կրակը բոցավառեց գլխաւոր ջահակիր՝ բասկետբոլիստուհի եւ Իրանի կանանց բասկետբոլի ազգ. հաւաքականի վաստակաւոր մարզիչ՝ Այլին Մելիքեանը, ապա հնչեց ջահակիր խմբին եւ մարզական պատուիրակութիւններին նւիրւած «Հայ Մարզիկի օրհներգը»՝ Թանիա Մինասեանի եւ Արայիկ Սիմոնեանի կատարմամբ:

Մարզիկների եւ իրաւարարների երդման կարգը կատարեցին Մարտունի Խաչիկեանը եւ Լուսինէ Սէթ-Աղայեանը, որից յետոյ խաղերը կազմակերպող միութեան Կենտրոնական վարչութեան խօսքն ընթերցեց նոյն վարչութեան անդամ Մանիա Ղուկասեանը:

Յաջորդիւ Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Արտաշէս Թումանեանի ողջոյնի եւ շնորհաւորանքի ուղերձն ընթերցեց Ռուդիկ Եարանեանը:

Ելոյթների աւարտին Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր հայրական պատգամը յղեց կազմակերպիչներին եւ մարզական պատուիրակութիւններին:

Դահլիճում ստեղծւած խանդավառ եւ ուրախութեամբ լեցուն պահը առաւել խանդավառւեց գեղարւեստական շքեղ յայտագրով, որի մեկնարկը տրւեց միութեանս Մշակութային միաւորի «Կռունկ» համոյթի պարախմբի եւ հրաւիրեալ պարուհիներ՝ Ալինա Յարութիւնեանի, Նինէ Պետրոսեանի եւ Սիւնէ Ուղուրեանի պարային համարի ներքոյ հսկայական գնդակի մուտքով, որը բացւելով երգչուհի Վանա Շիրւանեանը յայտնւեց գնդակի միջից եւ կատարեց «Sway» երգի երաժշտութեան հիման վրայ ստեղծւած Նոր Ջուղայի եւ Գարնանային խաղերի գովքը կատարող՝ Ռիմա Սիմոնեանի եւ Կարին Տէր-Մարտիրոսեանի հեղինակային երգը: Յաջորդ պարային համարը «,Լոյսերի» պարն էր՝ «Կռունկ» պարախմբի կատարմամբ, որը հիացրեց հանդիսատեսին: Հայկական մեղեդիների ներքոյ պարախումբը գեղեցկօրէն կատարեց «Գնչուական պարը», իսկ հայկական աւանդա-

կան եւ արդիական օտար պարերի մրցում-ներկայացումը՝ Վանա Ճիրաանեանի, Հարմա Կարապետեանի եւ Վանանդ Իսաղուլեանի երգի կատարման հետ զուգահեռ, կատարեցին Քրիստինէ Յակոբեանը եւ Ալինա Յարութիւնեանը, որը յանգեց միասնական «Քոչարի» պարով: Դպրոց-միութիւն միասնականութիւնը պատգամող «Հայաստան» երգով հանդէս եկաւ Նարբէ Գրիգորեանը՝ ընկերակցութեամբ Հայոց ազգ. «Քանանեան-Կատարինեան» դպրոցների աշակերտ-ուհիներից կազմուած խմբի: Գեղարուեստական յայտագիրը աւարտուեց «Հու-հա» երգի ներքոյ բոլոր պարուհիների եւ խաղերի խորհրդանիշ՝ Արիոի միասնական պարով:

Գեղարուեստական յայտագիրը ընդմիջում էր Նոր Ջուղայի եւ նրա մարզական աշխարհի ու 30-ամեայ Գարնանային խաղերի պատկերներով պատրաստուած տեսանիւթով եւ Գինեսի ռեկորդակիր՝ Ալի Բեհբուդի-Ֆարի բասկետբոլի գնդակով ցուցական ներկայացումով:

Բացման Հանդիսութեան գեղարուեստական ղեկավարն էր 30-րդ Գարնանային խաղերի բացման հանդիսութեան յանձնախումբը, որին մաս էին կազմում Ռիմա Սիմոնեանը, Կարին Տէր-Մարտիրոսեանը, Նայիրի Այւազեանը, Ալենուշ Մարտոյեանը, Վաղօ Տէր-Սուքիազեանը եւ Ռաֆֆի Մկրտչեանն ու Կենտրոնական վարչութեան եւ յանձնախմբի կապ՝ Լորետա Դաւթեան:

«Կռունկ» պարախմբի պարուսոյցն է Նունէ Մկրտչեանը եւ պարախումբը ներկայացնում էին Նարէ Ասատրեանը, Աւենիա Բաղրամեանը, Լեռնիկ Ղազարեանը, Սիւնէ Շահիջանեանը, Վանէ Մինասեանը, Վանէ Իսաղուլեանը, Ալինա Տէր-Սուքիազեանը, Սարինէ եւ Սերինէ Խուդաբախշեանները, Քրիստինէ Յակոբեանը, Նարէ Մարկոսեանը, Նազէ Ասատրեանը եւ պարի դասարանի սաները:

Ծրագրի իրականացման գործում համագործակցել էր Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի անդամ-ուհիները, ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Հնգօրեայ խաղերը կայացան՝ բասկետբոլ, սեղանի թենիս եւ ֆուտբոլ մարզաճիւղերում:

Խաղերի փակումը տեղի ունեցաւ մարտի 25-ին՝ մեդալաբաշխման հանդիսութեամբ:

Ծրագրի սկզբում հաղորդավարուհի՝ Վանա Ճիրաանեանը, խաղերի կազմակերպիչների անունից շնորհակալական խօսք ուղղեց բոլոր նրանց, որոնց համագործակցութեան շնորհիւ իր յաջող աւարտին հասաւ այս շրջանի խաղերը, ապա յաղթող խմբերին շնորհուեց՝ վկայագրեր, մեդալներ ու գաւաթներ:

Մրցանակները յանձնեցին Միութեան արտօնատէրեր՝ Թաթուլ Օհանեանը եւ Այլին Մելիքեանը, միութեան Կենտրոնական եւ Մարզական միաւորի վարչութիւնների անդամները, 30-րդ Գարնանային խաղերի բացման հանդիսութեան եւ ֆուտբոլի յանձնախմբերի ներկայացուցիչները:

Կարգապահութեան գաւաթին արժանացաւ Հ.Մ.Ա.Կ.-ի Թաւրիզի մասնաճիւղի պատուիրակութիւնը:

Հնգօրեայ մարզական փառատօնը իրականացաւ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեան նախաձեռնութեամբ եւ կազմակերպիչ յանձնախմբի, միութեան Մարզական, Մշակութային, Երէցների, Սկաուտական եւ Ուսանողական միաւորների, Կարգապահական կազմի, Ֆուտբոլի յանձնախմբի ու անհատների անշահախնդիր համագործակցութեամբ:

Խաղերի ընդհանուր պատասխանատուն էր Կենտրոնական վարչութեան անդամ՝ Էդուարդ Ղազարեանը:

## ՏՕՆԱՀԱՆԴԷՍ-ՀԱՒԿԹԱԽԱՂ Ս. ՋԱՏԿԻ ԱՌԹԻՒ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Կիրակի՝ ապրիլի 1-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան կենտրոնատեղիում նշուեց Սուրբ Յարութեան տօնը: Հաւկթախաղ-տօնահանդէսի տեսքով իրականացուած հանդիսութեան կազմակերպողը նոյն միութեան Երէցների միաւորն էր: Խաղերի կազմակերպման գործում իրենց համագործակցութիւնն էին բերել Սկաւտական միաւորի անդամները:

Եւ այսպէս բազմահարիւր ներկաները միասնաբար նշեցին Յ. Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը:

Երեկոն իրականացուեց Միաւորի ամբողջ անձնակազմի համագործակցութեամբ:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԱՅ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔԸ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

64 տարի է, ինչ Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութիւնը ամենամեայ կարգով իրականական նոր տարեայ՝ «Նոռուզ»-ի արձակուրդների ընթացքում, Ս. Ամենափրկիչ վանքի ցուցասրահում կազմակերպում է իր գարնանային ցուցահանդէս-վաճառքը, հիմնականում նպատակ ունենալով օգտակար հանդիսանալու ձեռներեց հայուհիներին՝ իրենց ձեռարուեստի վաճառման գործում: Ցուցահանդէսը կազմակերպիչների համար եւս ունի որոշակի հասոյթ, որը մինչեւ այսօր ամբողջութեամբ ծառայեցուել է բարեսիրական նպատակներին՝ յատկապէս անօգնական ընտանիքների կենցաղային պայմանների բարելաւման ուղղութեամբ:

Այս տարի ցուցահանդէսի պաշտօնական բացումը կատարուեց երեքշաբթի՝ մարտի 20-ի առաւօտեան, ձեռամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ ներկայութեամբ Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի, կազմակերպիչ միութեան անդամուհիների ու համայնքի ժողովրդի:

## ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութեան նախաձեռնութեամբ եւ նոյն միութեան անդամուհիների ջանադիր աշխատանքով, Ս. Յարութեան եւ իրանական «Նոռուզ» տօների առթիւ, բարեսիրական նպատակներով գարնանային ցուցահանդէս-վաճառքն իրականացուեց ուրբաթ՝ 2018 թուականի մարտի 2-ի առաւօտեան, Ընկերութեան երկրորդ հաւաքատեղիում:

Ցուցահանդէս-վաճառքի հասոյթն ամբողջովին ծառայեցուելու է բարեսիրական աշխատանքների իրագործմանը:

## ՄԱՅՐԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Նախաձեռնութեամբ Նոր Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան, շաբաթ՝ թուականիս ապրիլի 7-ի երեկոյեան, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ»

միութեան դահլիճում նշուեց Մայրերի տօնը՝ ՀՀ հիմնադրման 100-ամեակին նուիրուած:

Միջոցառմանը ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, քահանայից դասը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների եւ հայոց դպրոցների ներկայացուցիչները, այլ հրաւիրեալներ եւ ժողովուրդ:

Երեկոն սկիզբ առաւ «Կռունկ»-ի երաժշտութեան ներքոյ՝ Թեհրանի «Զարթօնք» պարախմբի երկու անդամների զուգապարով, ապա բացման խօսքով հանդէս եկաւ Վանա Զոհրաբեանը:

Գեղարուեստական յայտագրով ծրագիրը վարեցին Վանէ Շահնազարեանն ու Սեւադա Իսաղուլեանը՝ հետաքրքիր ու պատշաճ մէջբերումներով ու արտայայտութիւններով:

Առաջին բաժինը նուիրուած էր Մայրութեան եւ գեղեցկութեան տօնին, իսկ երկրորդ բաժինը՝ Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին: Առաջին բաժնում հանդէս եկան Շահինշահիի «Նարօտ» երիտասարդական երգչախմբի անդամներ՝ Նարէ Մարկոսեանը եւ Արգին Շահմիրզայեանը: Ասմունքեց Բարեգործական ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամ Վանիա Պետրոսեանը, պարեց «Զարթօնք»-ը, մեներգեց Վանանդ Իսաղուլեանը, զուգերգեցին «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի անդամ Թանիա Մինասեանն եւ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը: Մայրերին նուիրուած յուզիչ բաժինը եզրափակուեց գերպ. Հայր Սուրբի միջոցով «Երազ-երազ» երգի մենակատարմամբ:

Երկրորդ բաժինը սկիզբ առաւ «Նարօտ» երգչախմբի անդամ Արութին Հախնազարեանի երգի կատարմամբ. Երգեց «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի անդամ Վանա Շիրւանեանը եւ «Նարօտ»-ի անդամ Շանթ Թահմազեանը: Ասմունքեց «Փարոս» խմբից Մեղրի Կարապետեանը: Երգի կատարմամբ հանդէս եկան Վանանդ Իսաղուլեանն ու Արութին Հախնազարեանը: Մեներգեց Թանիա Մինասեանը: «Զարթօնք» պարախումբը հանդէս եկաւ պարերով:

Անզուգական կատարումներով յագեցած այս ձեռնարկի ընդհանուր ղեկավարն էր գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, իսկ «Զարթօնք» պարախմբինը՝ Լորետա Աւետիսեանը: Ծրագրի իրականացման գործում համագործակցութիւն էր ցուցաբերել Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի խմբավար Արմէն Ամիրխանեանը: Երաժշտութիւնների գործիքաւորումը կատարուել էր Հարմա Կարապետեանի միջոցով:

Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, թեմի Պատգ. ժողովի ատենապետ Թաթուլ Օհանեանի եւ Բարեգործական ընկերութեան նախագահ Սանդրա Խուդաբախշեանի ձեռամբ գնահատագրեր յանձնուեցին երեկոյի ղեկավարներին ու կատարողներին:

Վերջում արտայայտուեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերպ. Տ. Սիփան ծ.վրդ. Քէչէճեանը:

## ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՄՏԵՐՄԻԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՀԱՅ ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՅԱՐԿԻ ՆԵՐՔՈՅ

Մայրութեան եւ գեղեցկութեան տօնի առթիւ, Հայ Ուս. «Չհարմահալ» միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ, պատկան կենտրոնատեղիում, անդամուհիների մասնակցութեամբ կազմակերպուեց մտերմիկ ու ջերմ միջոցառում, չորեքշաբթի՝ 2018 թւականի ապրիլի 18-ի

երեկոյեան:

Միջոցառումը բացուած յայտարարուեց կազմակերպիչ վարչութեան անդամուհի Նորա Շահիջանեանի տօնի առթիւ շնորհաւորանքի խօսքով:

Խօսքին յաջորդեցին օրուայ առթիւ շնորհաւորանքներն ու բարեմաղթանքները միութեան ամենաերէց մայր Նուարդ Վարդանեանի միջոցով:

Խանդավառ եւ մտերմիկ ծրագրի ընթացքում երգերի կատարումով հանդէս եկան Համասփիւռ Մարգարեանը, Վարդուշ Հախնազարեանը, Ռիտա Մինասեանը եւ Քառոլին Վարդանեանը, իսկ աստուածաբանութեամբ՝ Արմինէ Փանոսեանը, Վեհանուշ Խուդաբախշեանը եւ փոքրիկ Անի Թորոսեանը:

## ՀՀ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒԻՐՒԱԾ ՇԱԽՄԱՏԻ ԲԱՑ ՄՐՑԱՇԱՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Փերիոյ կրթ միութեան Կենտ. վարչութեան նախաձեռնութեամբ եւ «Արմէն» շախմատի ակումբի տնօրինութեան համագործակցութեամբ, ուրբաթ՝ 2018 թւականի մարտի 16-ի առաւօտեան, սոյն միութեան կենտրոնատեղիում կազմակերպուեց շախմատի բաց մարցաշար՝ նուիրուած Հայաստանի Հանրապետութեան հիմնադրման 100-ամեակին:

Մրցաշարն անցկացուեց երկու տարիքային խմբերի շրջաններում՝ մինչեւ 12 եւ մինչեւ 14 տարեկան: Առաջին խմբի մրցոյթներին մասնակցել էին 22, իսկ երկրորդին՝ 10 մարզիկներ, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» ու Փերիոյ Կրթ. միութիւնների շախմատի խմբերից եւ «Արմէն» շախմատի ակումբի Սպահանի եւ Սեփահանշահրի մասնաճիւղերից: Մասնակցել էին նաեւ ազատ մարզիկներ:

Միջոցառման մեկնարկը տրուեց կազմակերպիչ միութեան Կենտ. վարչութեան նախագահ Վահան Թահմազեանի ողջոյնի եւ բարիգալստեան խօսքերով:

Բացման ծրագրին ներկայ էին նաեւ Սպահանի հայոց թեմի ՀՀ 100-ամեակի Կենտ. յանձնախմբի ատենապետ Թաթուլ Օհանեանը եւ անդամ Վահէ Թորոսեանը:

Փակման ծրագրին ներկայ էին նաեւ ՀՀ 100-ամեակի Նոր Ջուղայի ենթայանձնախմբի ներկայացուցիչները:

## ԱՐԵՒԱԳԱԼԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻՋԻՆՔԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շորեքշաբթի՝ 2018 թւականի մարտի 7-ի առաւօտեան Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը եւ իրեն ուղեկցող հոգեւոր հայրերն ու համայնքի վարչութեան ներկայացուցիչները այցելեցին «Սրբոց Վարդանանց» տարրական դպրոցը, որտեղ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը հակիրճ եւ մատչելի լեզուով բացատրեց պահեցողութեան իմաստը եւ Միջինքի խորհուրդը աշակերտների համար:

Այնուհետեւ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում տեղի ունեցաւ Արեւագալի արարողութիւն՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ եւ ներկայութեամբ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա

Ծ. վրդ. Գուճանեանի, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի եւ դպրաց դասի: Օրուայ արարողութեանը մասնակցել էին նաեւ համայնքի ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչները եւ անդամները:

Արեւագալի արարողութեանը յաջորդեց Շահինշահիրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան նախաձեռնութեամբ Միջինքի առիթով կազմակերպուած միջոցառումը՝ համայնքի ազգայիններին, միութենականներին եւ հաւատացեալ հայորդիների մասնակցութեամբ:

## ԱՒԱԳ ՇԱԲԱԹԻԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀԻՐԻ «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ԵԿԵՂԵՑՈՒՄ

Աւագ շաբաթայ բոլոր արարողութիւնները կանոնաւոր կերպով կատարուեցին Շահինշահիրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցում, որոնց ստորեւ անդրադառնում ենք.

*Աւագ երեքշաբթի՝*

Աւագ երեքշաբթի՝ 2018 թւականի մարտի 27-ի երեկոյեան, Տասը կոյսերի առակի յիշատակի օրուայ արարողութիւնը կայացաւ, Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ ու կատարողութեամբ, եւ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի, սարկաւագաց դասի ու առակը մարմնաւորող տաս երիտասարդուհիների մասնակցութեամբ:

*Աւագ հինգշաբթի՝*

Մարտի 29-ի առաւօտեան, սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ եւ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ձեռամբ: Արարողութեան աւարտին ներկաները հաղորդութիւն ստացան:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5:30-ին, կատարուեց Ոտնլուայի կարգը, գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ եւ կատարողութեամբ ու համայնքի եկեղեցական դասի մասնակցութեամբ: Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի որոշմամբ Հ.Հ. հիմնադրման 100-ամեակի առիթով կարգի ընթացքում Հայր Սուրբը լուաց համայնքի վաստակաւոր ազգայիններին եւ միութենականների ոտքերը:

Ոտնլուայի արարողութեանը յաջորդեց Խաւարման հսկումի կարգը: Աւետարանական ընթերումներից յետոյ մարուեցին եկեղեցու լոյսերը:

*Աւագ ուրբաթ՝*

Մարտի 29-ի երեկոյեան, առաջին անգամայ համար Շահինշահիրում կատարուեց Քրիստոսի թաղման կարգը՝ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ եւ կատարողութեամբ ու արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ու սարկաւագաց դասի մասնակցութեամբ:

Սկզբում օրհնուեց Քրիստոսի խորհրդանշական դագաղը, ապա գերպ. Հայր Սուրբն իր խօսքում նշեց, որ Քրիստոսը՝ որպէս մարդ եւ Աստուած, աշխարհ եկաւ եւ որպէս մարդ թաղուեց իմանալով, որ թաղուելու է իւրաքանչիւրի մեղքերի համար: Ապա ընդգծեց, որ այսօր Քրիստոսի թաղման կարգը յիշեցինք, սակայն նա՝ որպէս Աստուած անմահ է ու միշտ ներկայ մեր կեանքում:

Այնուհետեւ եկեղեցու բակում Տիրոջ խորհրդաւոր գերեզմանը վեր բարձրացնելով կատարուեց Քրիստոսի թաղման թափօրը:

*Աւագ շաբաթ՝*

Ս. Զատկի նախատօնակի՝ Ճրագալոյցի ս. պատարագը մատուցեց մարտի 31-ի երեկոյեան՝ արժն. Տէր Սահակ Քհնյ. Մինասեանի ձեռամբ: Պատարագին նախագահում էր գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը:

Բոլոր արարողութիւններին ներկայ էին Շահինշահիրի հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչներն ու հոծ թւով հաւատացեալներ:

Ժամերգութիւնների եւ պատարագների երգեցողութիւնը կատարեց «Նարեկ» երգչախումբը:

## Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՆՇՒԵՑ ՇԱՀԻՆՇԱՀԻՐԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կիրակի, 2018 թւականի ապրիլի 1-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. Յարութեան տօնի պատարագը մատուցեց Շահինշահիրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցում: Օրուայ պատարագիչն էր Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը. մասնակցում էին նաեւ արժն. Տէր Սահակ քհնյ.

Մինասեանն ու սարկաւագաց դասը:

Պատարագը աւարտելուն պէս եկեղեցում գերպ. Հայր Սուրբն ընդունեց ս. Յարութեան տօնի առիթով շնորհաւորանքներ:

Ներկայ էին Շահինշահիր հայ համայնքի վարչութեան անդամներն ու հոծ թւով ժողովուրդ:

Երգեցողութեամբ հանդէս եկաւ Շահինշահիր «Նարեկ» երգչախումբը:

## Ս. ԶԱՏԿԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ 2018 թ. ապրիլի 1-ի երեկոյեան, Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահիր մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ եւ Երէցների ու Մարզական միաւորների կազմակերպութեամբ, նոյն մասնաճիւղի կենտրոնատեղիում, տեղի ունեցաւ դաշտահանդէս՝ Քրիստոսի յարութեան տօնի առիթով:

Դաշտահանդէսին իրենց մասնակցութիւնն էին բերել հոծ թւով ժողովուրդ:

## ՄԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ՆՒԻՐՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Հինգշաբթի՝ 2018 թւականի ապրիլի 5-ի երեկոյեան, Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահիր մասնաճիւղի կենտրոնատեղիի սրահում, ջերմ եւ խանդավառ մթնոլորտի ներքոյ կազմակերպուեց հանդիսութիւն՝ Մայրութեան եւ գեղեցկութեան տօնի առթիւ:

Միջոցառումն իրականցուել էր նոյն մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ եւ Երէցների ու Մարզական միաւորների կազմակերպութեամբ:

Սկզբում ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքերով ու տօնական բարեմաղթանքներով հանդէս եկաւ Վարդուհի Պօղոսեանը, ապա Ռազմիկ Մարկոսեանն արտասանեց իր հեղինակած բանաստեղծութիւնը՝ նուիրուած հայ մայրերին:

Անմոռանալի երեկոն աւարտուեց հայկական շուրջպարով:

Ծրագրին ներկայ էին Շահինշահիր հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչներն ու ժողովուրդ:

## ԳԱՐՈՒՆԸ ԽԱՆԴԱՎԱՌ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԴԻՄԱՒՈՐԵՑԻՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԸ

Շորեքշաբթի՝ 2018 թ. մարտի 14-ի առաւօտեան, գարնանամուտի առիթով Շահինշահիրի հայոց ազգ. «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տնօրինութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր զբօսանք, ուր մի ամբողջ դպրոցական օրուայ ընթացքում սաները վայելեցին գարնանային ջերմ առաւօտը, խաղացին ու զուարճացան զբօսայգու տարբեր բաժիններում եւ մօտիկից ականատեսը եղան բնութեան զարթօնքի՝ ի մասնաւորի ծաղկած ծառերի ու ծաղիկների բողբոջների: Պայծառ օրուայ աւարտին մանուկները տուն վերադարձան իրենց հետ տանելով նորանոր փորձառութիւններ ու գեղեցիկ յուշեր:

Կիրակի՝ ապրիլի 8-ի առաւօտեան, դպրոցում, աշակերտներին այցելեցին երկու անսովոր, բայց հաճելի հիւրեր: Դպրոցի տնօրինութեան եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ Զատկական տօնի առիթով կազմակերպուել էր միջոցառում, ուր փոքրիկներին այցելութեան եկան զատիկն ու նապաստակը: Սաներն իրենց սիրելի հիւրերի հետ զուարճացան, պարեցին ու թռչկոտեցին, իսկ աւելի ուշ միասնաբար ներկեցին տօնական հաւկիթներ:

Նրանք վերջում զատկից ու նապաստակից ստացան ծնողական խորհրդի պատրաստած նուէրները:

## ՀՀ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՒԻՐԱԾ ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի հովանաւորութեամբ եւ «Փերիոյ» Կրթասիրաց միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ, կիրակի՝ 2018 թւականի ապրիլի 8-ի երեկոյեան, «Սրբոց Վարդանանց» սրահում, Մայրութեան եւ գեղեցկութեան տօնի առթիւ կազմակերպւել էր հայ մայրերի մեծարման երեկոյ՝ նուիրուած ՀՀ անկախութեան 100-ամեակին:

Միջոցառմանը ներկայ էին՝ գերպ. Տէր Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, արժ. Տէր Սահակ քհնյ. Մինասեանը, Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ու «Փերիոյ» Կրթասիրաց միութեան Կենտ. վարչութեան ներկայացուցիչները, մասնաճիւղի անդամ-ուհիները եւ համայնքի իգական սեռի ներկայացուցիչները:

Սկզբում ողջոյնի խօսքով հանդէս եկաւ կազմակերպիչ վարչութեան անդամ Գայիանէ Վարդանեանը:

Ծրագրում իր հայրական պատգամը փոխանցեց Հայր Սուրբը:

Հայր Սուրբի ձեռամբ միութեան վարչութեան նախատեսած ծաղիկները բաժանուեցին սրահում ներկայ բոլոր մայրերին:

## ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱԾ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Շաբաթ՝ 2018 թւականի ապրիլի 11-ի կէսօրից յետոյ ժամը 4:00-ին, «Սրբոց Վարդանանց» սրահի յարկի ներքոյ, Շահինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութիւնը նախաձեռնել էր ձեռնարկ՝ Մայրերի տօնի առիթով: Ծրագրին ներկայ էին՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը, արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, համայնքի հայոց ազգ. դպրոցների ուսուցչական կազմն ու ծնողական խորհուրդը, «Նարեկ» երգչախմբի ներկայացուցիչները, կազմակերպիչ միութեան անդամուհիները եւ մի շարք այլ հրաւիրեալներ:

Բացման խօսքով հանդէս եկաւ միութեան նախագահուհի Անահիտ Օհանեանը:

Այնուհետեւ բանախօսական զրոյց ծաւալեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանը:

Օրուայ առիթով իր ջերմ շնորհաւորանքները փոխանցեց նաեւ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը: Միջոցառման գեղարուեստական բաժնում երգերով ու ասմունքներով ելոյթ ունեցան՝ Արգին Շահմիրզայեանը, Ռիտա Մինասեանը, Ժաննա Շահբազեանը, Այիդա Մուրադեանը, Վարդուհի Պօղոսեանը, Սառա Գրիգորեանը, Քարմէն Յակոբեանն ու երէցկին Սեւան Քէօշկէրեանը:

## ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՑՈՒՑԱԴՐՈՒԵՑ «ԾՊՏԵԱԼ ԿԵԱՆՔ» ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԸ

Շահինշահրի Հայ Դատի գրասենեակի նախաձեռնութեամբ հինգշաբթի՝ 2018 թւականի ապրիլի 26-ի կէսօրին, Հայ Կանանց եկեղեցասիրաց միութեան գրասենեակում, նոյն միութեան անդամուհիների մասնակցութեամբ, ցուցադրուեց Ցեղասպանութեան ժամանակ հարկադրաբար հաւատը փոխած հազարաւոր հայ ընտանիքների մասին պատրաստուած «Ծպտեալ կեանք» խորագրով վաւերագրական ֆիլմը:

Սկզբում Շահինշահրի Հայ Դատի գրասենեակի անունից արտայայտուեց Արիս Դաւթեանը:

Ֆիլմի աւարտին պրն. Դաւթեանն աւելի լայն տեղեկութիւններ փոխանցեց Արեւմտեան Հայաստանի եւ

առհասարակ Թուրքիայում բնակւող ծպտեալ հայերի կեանքի ու սովորութիւնների կապակցութեամբ:

Ծրագրի կազմակերպման գործում Հայ Դատի գրասենեակի հետ համագործակցել էր Հայ Կանանց եկեղեցասիրաց միութեան վարչութիւնը:

# ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

<u>Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւն</u>

***Ս. Գէորգ եկեղեցի***

-2.000.000 ռիալ. Աքրամ

***Խաչի զոյգելու համար***

-200.000-ական ռիալ. Սեդա Այլազեան

***Լուսահանգիստի նուիրատուութիւնների ցանկ***

-1.000.000 ռիալ. Կարօ Յովսէփեան

-500.000-ական ռիալ. Տիգրանուհի Մանսուրեան, Յարութ Ղուկասեան՝ իր ծնողների Փիլիկ եւ Արեւիկ Ղուկասեանների յիշատակին, Վազգէն Մինասեան, Շիրակ Ղարիբեան, Սելին Ղարիբեան, Ռազմիկ Յովսէփեան, Վարդան եւ Կարինէ Մկրտչեաններ, Անդրէ Նազարեան, Վարուժ Ղարիբեան, Արգին եւ Վանիա Մեսրոպեաններ, Զաւէն Մուրադեան, Արսէն եւ Վանուհի Ղազարեաններ, Ռիմա Ստեփանեան

-300.000-ական ռիալ. Վրէժ Տէր-Յովհաննիսեանի յիշատակին, Յովհաննէս Խուդավերդեան

-200.000-ական ռիալ. Վէդի Օրոջեան, Յարութ եւ Ժանետ Ղուկասեաններ՝ Կարապետ Սիմոնեանի յիշատակին, Պետրոսեան եւ Ծատուրեան, Պայծառ Սիմոնեան, Ղուկաս Գրիգորեան

-100.000 ռիալ. Ռուբէն Խուդավերդեան

-50.000 ռիալ. Վազգէն Մինասեան

***Ս. Աստուածածին եկեղեցի Աստուածածնի Աւետման տօնի առթիւ***

-300.000 ռիալ. Տիգրանուհի Ղեւեան

***Հանգուցեալ Արեգ Եսայեան-Մանուկեանի յիշատակին***

-1.000.000 ռիալ. Աստղիկ Մարկոսեան

-300.000-ական ռիալ. Գառնիկ եւ Օդէթ Բաղդասարեաններ, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ

-200.000-ական ռիալ. Ռազմիկ Խուդավերդեան, Ծաղկուշ Աբէլեան, Սաթօ Կիրակոսեան, Լիդուշ Թէյմուրեան

-50.000 ռիալ. Սամուէլ Ասատրեան

***Հանգուցեալ Ալեքսանդր Մինաս Խաչիկեանի յիշատակին***

-500.000-ական ռիալ. Էդուին Յովսէփեան, Վահիկ Փանոսեան, Արարատ Մելիքեան

-300.000 ռիալ. Մարջան Մինասեան

***Հանգուցեալ Բեգզադ Թորոսեանի յիշատակին***

-2.000.000-ական ռիալ. Սերոբ եւ Երանուհի Թորոսեաններ, Ռոստամ եւ Ժենիկ Թորոսեաններ, Սոնիկ եւ Երւանդ եւ Լիդա Թորոսեաններ

***Հանգուցեալ Անուշ Վարդանեան-Լալազարեանի յիշատակին***

-1.500.000 ռիալ. Արմէն Փանոսեան

-600.000 ռիալ. Արմոնդ եւ Սոնիա Փանոսեաններ

-500.000-ական ռիալ. Վարուժ Փանոսեան, Վազրիկ եւ Անանիա Յակոբեաններ, Գառնիկ եւ Օդէթ Բաղդասարեաններ

-400.000 ռիալ. Սիմիկ Ղարախանեան

-300.000-ական ռիալ. Վարուժ եւ Սթելլա Վարդանեաններ, Տիգրանուհի Մանսուրեան, Անդրանիկ Յարութիւնեան, Մինուշ Մելիքեան, Սաթօ Կիրակոսեան, Նվարդ Վարդանեան, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ

-200.000-ական ռիալ. Արա Ամրանեան, Սերոժ եւ Արծիկ Վարդանեաններ

-150.000 ռիալ. Լուսիկ Ղազարեան

-100.000 ռիալ. Գեղանի Ղարախանեան

***Հանգուցեալ Անուշ Ներսիսեան-Մաքեանի յիշատակին***

-1.500.000 ռիալ. Ռոբերթ Սարեան

-300.000 ռիալ. Արմոնդ եւ Սոնիա Փանոսեաններ

-200.000-ական ռիալ. Արաքս Միրզայեան, Արտուշ եւ Ֆրիդա Ղարիբեաններ

-150.000 ռիալ. Կիտուշ Մանսուրեան

-100.000 ռիալ. Հրաչիկ Կարապետեան

***Հանգուցեալ Խանում (Մանուշակ) Դաւթեան-Յովսէփեանի յիշատակին***

-600.000 ռիալ. Խաշաքի ընտանիք

-500.000-ական ռիալ. Յակոբ Մարկոսեան, Հրաչ Դաւթեան, Յարութ եւ Շողիկ Մեսրոպեաններ

-300.000-ական ռիալ. Արարատ եւ Թամար Իսախանեաններ, Աբրահամ եւ Վոլգա Մեսրոպեան
-200.000-ական ռիալ. Մասիս Քեշիշեան, Համօ եւ Ռիտա Մկրտչեաններ, Զաւէն Մուրադեան, Էմուշ Օրդուբէգեան, Իւղաբեր Մանուկեան
-150.000 ռիալ. Լուսիկ Ղազարեան
-100.000 ռիալ. Պերճիկ Քամարզարեան

***Հանգուցեալ Խաչխաթուն Քեշիշ Անդրիասեանի-Պարսամեանի յիշատակին***
-500.000-ական ռիալ. Մերի եւ Նինա Վարդանեաններ, Հայդուկ Մարգարեան, Վրէժ Շիրւանեան
-400.000 ռիալ. Մկրտիչ եւ Անիտա Աւետումեաններ
-300.000 ռիալ. Վահիկ եւ Անետ Փանոսեաններ
-250.000 ռիալ. Մինուշ Մելիքեան
-200.000-ական ռիալ. Ղուկաս Գրիգորեան, Մասիս Յովհաննիսեան
-150.000 ռիալ. Ղազար եւ Արաքս Թահմազեաններ

***Հանգուցեալ Հայրապետ Խուդավերդեանի յիշատակին***
-1.000.000 ռիալ. Սիլվարդ Թորոսեան
-300.000 ռիալ. Մարջան Մինասեան

**Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդ**
***Հոգեւոր Երգերի համերգի առթիւ***
-1.000.000 ռիալ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան
-600.000 ռիալ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան

***Կիրակնօրեայ դպրոց***
-1,000,000 ռիալ. Էրւին եւ Էդլին Յովսէփեաններ

**Ծանր Հիւանդների Հիմնադրամ**
-1.000.000 ռիալ. Մադլէն Ղարիբեան

**Կրթական Խորհուրդ**
-10.000.000 ռիալ. Նոէլ եւ Արմոնդ եւ Ոլգա եւ Անուշ եւ Լէոնարդ Քեշիշեաններից՝ հանգուցեալ Պօղոս Քեշիշեանի յիշատակին

**Գերեզմանատան Բարեշարդման Մարմին**
-2.000.000 ռիալ. Թէլմա Հայրապետեան՝ Ժորժ Հայրապետեանի մահուան երկրորդ տարելիցի առթիւ
-1.000.000-ական ռիալ. Սուրիկ Սէթ-Աղայեան՝ Հերոս եւ Վազգէն Սէթ-Աղայեանների յիշատակին, Սերոժ Շահիջանեան՝ Արսէն եւ Նվարդ Շահիջանեանների յիշատակին, Մկրտչեան ընտանիք՝ Նվարդ Իսաղուլեանի յիշատակին
-600.000 ռիալ. Գուրգէնեան ընտանիք՝ Աշոտ Գուրգէնեանի յիշատակին
-500.000-ական ռիալ. Սաքօ Յակոբեան՝ հանգուցեալ Թագուշ եւ Տէր-Սարգսեանների յիշատակին, Գառնիկ Զարգարեան, Ալվարդ Զարգարեան, Վարդան Ալեքսանդրեան՝ Հիլդա Մարգարեանի յիշատակին, Վարդան Ալեքսանդրեան՝ Տիգրան եւ Շուշան Ալեքսանդրեաններ, Վարդան Ալեքսանդրեան՝ Զաքար եւ Արփենիկ Մարգարեաններ, Հայկազ Ղազարեան, Վարուժ եւ Ստելլա Վարդանեաններ, Տիգրանուհի Ղարիբեան, Անդրէ Քալանթար-Օհանեան, Էմանուէլ եւ Փիւնիկ Ասատրեաններ, Վազրիկ Յակոբեան, Նորիկ Յարութիւնեան
-400.000 ռիալ. Ծաղկուշ Մկրտչեան՝ Գալուստ եւ Ծովինար եւ Սուրիկ Մկրտչեանների յիշատակին
-300.000-ական ռիալ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Սեդիկ Այլազեան՝ իր ծնողների յիշատակին, Սեդիկ Այլազեան
-200.000-ական ռիալ. Աշխէն Հախվերդեան, Հրաչ Մուրադեան
-100.000-ական ռիալ. Ռայմոնդ Մարկոսեան, Համազ Մարգարեան

**Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» մոռթուն**
***Զանազան նուիրատուութիւններ***
-2.500.000 ռիալ. Բեգիջանեան ընտանիք՝ Վազրիկ Բեգիջանեանի յիշատակին
-2.000.000 ռիալ. Նոէլ եւ Մասիս Մինասեաններ՝ Արմենակ Աղախանեանի յիշատակին (փոխան ծաղկեպսակի)
-1.500.000 ռիալ. Անի Թահմազեան՝ Ռուբիկ Բաբումեանի յիշատակին
-1.000.000-ական ռիալ. Օֆիկ Վարդանեան՝ Արամ Վարդանեանի յիշատակին (փոխան ծաղկեպսակի), Էդիկ եւ Սեդա Այլազբալեաններ՝ Դերենիկ Թորոսեանի յիշատակին (փոխան ծաղկեպսակի)
-500.000 ռիալ. Արուսեակ Փիլոսեան

***Իրանահայ 30-րդ Գարնանային խաղերի բացման հանդիսութեան առթիւ***
-20.000.000 ռիալ. Վազրիկ Մարկոսեան
-10.000.000 ռիալ. Հայ Դատի յանձնախումբ
-5.000.000-ական ռիալ. Հայ Կանանց Գթութեան միութիւն, Հրայր Ղուկասեան, Ֆրէդ Պօղոսեան
-2.000.000-ական ռիալ. Զարեհ Յովսէփեան, Էդմոնդ Թահմազեան
-1.000.000-ական ռիալ. Ն. Զ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Վահիկ Թորոսեան, Նարբէ Քոչարեան, Նարեկ Միրզայեան, Անդրէ Քալանթար-Օհանեան, Լալա Դիլանչեան
-500.000-ական ռիալ. Փերիոյ Կրթ. միութիւն, Ն. Զ. Հայ Ուս. Շհարմահալ միութիւն, Նարէ Ասատրեան, Վանենի Յովսէփեան, Ռազմիկ Ալեքսանդրեան, Անի Ղազարեան, Արգամ Թորոսեան, Առիւծ Խաչատրեան, Արման Ալեքսանդրեան, Սելինէ եւ Սարինէ Խուդաբախշեաններ, Նարբէ Գրիգորեան, Արամէ եւ

Արփինէ Մովսիսեաններ, Հրաչ Տէր-Յովհաննիսեան, Համիկ Ալեքսանդրեան, Անի Սիմոնեան, Վանէ եւ Վանանդ Իսաղուլեաններ, Իզաբէլ Կարապետեան
-300.000-ական ռիալ. Անահիտ Փիլոսեան, Ռիմա Խաչիկեան

***«Թաթուլ Ալթունեան» երգի-պարի պետական անսամբլի համերգի առթիւ***
-3.000.000 ռիալ. Հայ Դատի յանձնախումբ
-2.500.000 ռիալ. Հայ Կանանց Գթութեան միութիւն
-1.000.000-ական ռիալ. Հայոց ազգ. Մանկապարտէզ-Նախակրթարան, Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան, Զարեհ Յովսէփեան
-500.000-ական ռիալ. Սպահանի Հայոց Թեմի Կրթական խորհուրդ, Հայոց ազգ. «Արմէն» կրթահամալիր, Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Փերիոյ Կրթ. միութիւն, Հայ Ուս. Զհարմահալ միութիւն, Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Ս. Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբ, Համիկ Ալեքսանդրեան, Կարին Տէր-Մարտիրոսեան, Արբի Բաբումեան, Սոնիկ Բաղումեան, Վանօ եւ Այլին Վարդանեաններ
-400.000 ռիալ. Հայոց ազգ. «Քանանեան-Կատարինեան» դպրոց
-300.000 ռիալ. Քլարիս Գրիգորեան
-200.000 ռիալ. Սիլա Ղարախանեան

**Ն. Ջ. Հայ Կանանց Գթութեան Մուսաթուն**
**(Կարմիր Խաչ)**
-5.000.000 ռիալ եւ բժշկական յատուկ ներքնակ եւ բժշկական պիտոյք. Մանուշակ Դաւթեան-Յովսէփեանի յիշատակին՝ իր զաւակների կողմից
-3.000.000-ական ռիալ. Փարիսա Ղուշի, Ոմն
-2.000.000 ռիալ. Ոմն
-1.000.000 ռիալ եւ թխուածք. Անուշ Ներսէսեանի յիշատակին
-1.000.000 ռիալ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան
-500.000-ական ռիալ. Էլսիկ Պետրոսեան, Ոմն պարսկուհի
-Հաւ. Արմենակ Ծատուրեան
-Միս. Ովսան եւ Մարիամ
-Նեսքաֆէ, թէյ եւ մրգեղէն. Բէլղիս Ամէրի Նասաբ
-Թխուածք եւ օշարակ. Սեդա Բաբայեան
-Սուրճի հիւրասիրութիւն. Ռոմէլ Ստեփանեան
-Քաղցրաւենիք. «Շուշանիկ» երգչախումբ
-Քաղցրաւենիք եւ ծաղիկ. Դկտ. Զանգիզի
-Ծաղիկ. Ս. Աստուածածին եկեղեցու կանանց յանձնախումբ
-Թխուածքներ. Շաքէ Աւետեան, Անետ Յարութիւնեան, Ժանետ Խուդավերդեան, Ոմն

**Ն. Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն**
***Զանազան նուիրատուութիւններ***
-3.000.000 ռիալ. Սեդա Այլազեան՝ նոր տարւայ օժանդակութիւն
-2.500.000 ռիալ. Ոմն
-2.000.000-ական ռիալ. Յասմիկ Հայրապետեան՝ նոր տարւայ առթիւ, Ոմն՝ ի նպաստ կարիքաւորների
-1.000.000-ական ռիալ. Անժէլ Կիրակոսեան՝ Նոր տարւայ առթիւ, Պետրոս Ղարիբեան, Տէր եւ տկն. Սէթ-Աղայեաններ, Ոմն
-500.000 ռիալ. Ֆաթեմէ Շաֆիզադէ

***Հանգուցեալ Արմենակ Աղախանեանի յիշատակին***
-1.000.000-ական ռիալ. Մելիք եւ Յասմիկ Մինասեաններ, Ժորժ եւ Արաքս Գէորգեաններ

***Կոյս Հռիփսիմեանց տօնի առթիւ***
-300.000 ռիալ. Ստելլա Դիլանչեան՝ իր մօր եւ սկեսուրի յիշատակին
-200.000-ական ռիալ. Ռիմա Դիլանչեան՝ իր մօր յիշատակին, Սոնիկ Կիրակոսեան՝ իր ծնողների յիշատակին

***Սրբոց Քառասնից Մանկանց տօնի առթիւ***
-200.000-ական ռիալ. Լալա Բաղդասարեան, Քրիստ Պօղոսեան

***Մայրերի տօնի առթիւ***
-1.000.000 ռիալ. Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութիւն
-700.000 ռիալ. Տէր Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան
-500.000-ական ռիալ. Տէր Խաչատուր քհնյ. Զարգարեան, Տէր Վազգէն քհնյ. Քէօշկէրեան, Այդա Աբրահամեան, Օդէթ Ծատուրեան, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ, հանգուցեալ Անուշ Վարդանեանի յիշատակին
-300.000 ռիալ. Տէր Վարդան քհնյ. Աղաբաբայեան

**Փերիոյ Կրթասիրաց Մուսաթուն**
***Մայրերի օրւայ առթիւ***
-2.000.000 ռիալ. Անուշ Մակոսեան
-500.000-ական ռիալ. Տէր Խաչատուր քահանայ Զարգարեան, Արշամ Ղազարեան, Արմոնդ Մարկոսեան, Գուրգեն Թահմազեան, Հայրօ Քեշիշեան, Ժանեթ Դաւթեան, Սօնիկ Կիրակոսեան, Մկրտիչ Մարկոսեան, Նւարդ Վարդումեան, Հայկազ Ղարիբեան, Հրանուշ Շահնազարեան
-400.000 ռիալ. Հիլդա Ծառուկեան
-300.000-ական ռիալ.Մառիտա Յարութունեան, Մարգարիտ Զարգարեան, Գալստան Սիմոնեան,

Հրաչիկ Շահիջանեան, Միքայէլ Զոհրաբեան, Սրփուհի Աղուրեան, Հրանուշ Ղարիբեան, Իղխանուհի Քեշիշեան, Անդրանիկ Ասատրեան, Մարիամ Զարգարեան, Հռիփսիմէ Համբարձումեան, Անդրանիկ Յակոբեան, Վարդուհի Յովսէփեան,
-200.000-ական ռիալ. Խաչիկ Յովսէփեան, Սամսոն Զարգարեան, Ռիտա Մինասեան, Լուսիկ Առաքելեան, Հիլդա Յովսէփեան, Արաքս Մկրտչեան
-150.000 ռիալ. Արևիկ Սահակեան

<u>Հայ Ռուս. Չհարմահալ Մուռթուն</u>
***«Ակունք» պարային համոյթի առթիւ***
-1,500,000 ռիալ. Հայ Դատի Յանձնախումբ
-1.000.000-ական ռիալ. ՇահինՇահրի Հայ Համայնքի վարչութիւն, Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Կենտ. վարչութիւն. Ն. Զ. Հայ Կանանց Գթութեան միութիւն
-500.000-ական ռիալ. «Փերիոյ» Կրթասիրաց միութեան Կենտ. վարչութիւն, Ն. Զ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութիւն, Շահինշահրի Կանանց Եկեղեցասիրած միութիւն, Ն. Զ. Հայոց Ազգային «Քանանեան-Կատարինեան» դպրոցներ, Ն. Զ. Հայոց Ազգային «Արմէն» կրթահամալիր, Ն. Զ. Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարան, Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Ս. Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբ, «Շուշանիկ» երգչախումբ, Մարօ Ծատուրեան, Սոնիա Միրզաբէգեան, Վաչէ եւ Նորա Շահիջանեաններ, Սիրանոյշ Բաբումեան, Նարբէ Գրիգորեան, Համիկ Ալեքսանդրեան
-400.000 ռիալ. Անահիտ Սէթ-Աղայեան
-300.000-ական -ռիալ. Արմինէ Փանոսեան, Էդմոնդ Օրդուբէգեան, Անուշիկ Յովհաննիսեան, Ալինա Գրիգորեան
-200.000-ական ռիալ. Վարդուհի Ղարախանեան, Լիդա Յակոբեան
-150.000 ռիալ. Սաթենիկ Միրզաբէգեան

***Մայրերի օրուայ միջոցառման առթիւ***
-500.000 ռիալ. Սանդրա Խաչատրեան
-300.000-ական ռիալ. Նորա Շահիջանեան, Ռիտա եւ Մարինէ Մկրտչեաններ
-250.000 ռիալ. Ծաղիկ Եադգարեան
-200.000-ական ռիալ. Սաթօ Վարդանեան, Մարօ Ծատուրեան, Լուսիկ Ղազարեան
-150.000-ական ռիալ. Համասփիւռ Մարգարեան, Նվարդ Վարդանեան
-100.000 ռիալ. Զարդիկ Սուքիասեան
-50.000 ռիալ. Վարդուշ Հախնազարեան

***Մանկական գեղարուեստական երեկոյ՝ նուիրուած ՀՀ 100-ամեակին***
-1.500.000 ռիալ. Մանէ Բարսեղեան
-1.000.000 ռիալ. Ն. Զ. Հայ Կանանց Գթութեան միութիւն
-500.000-ական ռիալ. Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութիւն, Ն. Զ. Հայոց Ազգային «Արմէն» Կրթահամալիրի ծնողական խորհուրդ
-300.000 ռիալ. Լիանա Զարդն Դաւուդ

<u>Շահրնշահրի Հայ Համայնքի Վարչութուն</u>
***«Սրբոց Վարդանանց» Եկեղեցի***
-Փոշեկուլ. Հրանդ եւ Այլին Շահբազեաններ՝ իրենց որդու՝ Բրայան Շահբազեանի խաչեղբայրութեան առթիւ
-1.000.000 ռիալ. Սեդիկ Ներսիսեան՝ Եղիսապետ Շահբազեանի յիշատակին
-800.000 ռիալ. Ադենա Շահբազեան

<u>Ստուգում Նախորդ համարներից</u>
***Յուլիս-Օգոստոս 2017 թուական***
-Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու նուիրատուութիւն
Ս. Աստուածածնի վերափխման տօնի առթիւ
500.000 ռիալ. Վայլէթ Հայրապետեան՝ Ռազմիկ Հայրապետեանի յիշատակին

***Սեպտեմբեր-Դեկտեմբեր 2017 թուական***
-Ս. Գէորգ եկեղեցու անուանակոչութեան տօնի նուիրատուութիւն
500.000 ռիալ. Վայլէթ Հայրապետեան՝ Ալեքսանդր եւ Ովսան Հայրապետեանների յիշատակին

*Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան մասնաճիւղինը՝ «Ալիք»-ի Շահինշահրի թղթակիցը։*

*Որոշ լուսանկարներ տրամադրում են Գեւիկ եւ Անդրէ Խաչատրեանները։*

**ՄԵՐ ՀԱՍՑԷՆ**
خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98-31-36243471-2
Fax: +98-31-36270999

# ՀԱՅԱՍՏԱՆ ՍԵՐՆՈՒՆ...